ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ՀԱՒԱՏՈՅ
ԵՒ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՍԻԵՏԱՐԱՆԻ

ԶՈՐԵՓՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՂԱԼԱԹԻԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԻՒՐՓՃԵԱՆ
— 1869 —

Հատ

ԱՆՀ

Ի ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. Տ. ԱՐԻՍՏԱԿԷՍ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԵՐԲ որ մէկը մեզի հարցընէ թէ՝ «Հաւատով ի՞նչ եմք», ամենքնիս ալ՝ մեծ ու պզտիկ՝ կը պատասխանենք թէ՝ «Քրիստոնեայ եմք»։

Աս դիւրին, պարզ ու կարճ պատասխանը ամենքնիս ալ կրնանք տալու. բայց երբ որ մեր հարցաքննողը աւելի հետաքրքիր ըլլալով մեզի հարցընելու ըլլայ թէ՝ «Քրիստոնեայ ըսելով ի՞նչ կ'իմանամք». քանի մը սակաւաթիւ բացառութիւններով, ամենքնիս ալ՝ մեծ ու պզտիկ՝ քիչ մը դժուարութիւն կը կրեմք աս երկրորդ հարցման պատասխանը բաւականացուցիչ կերպիւ տալու։

Աս քիչ մը դժուարութիւն կրելնուս պատճառը ի՞նչ է. մեր երիտասարդութեան ժամանակը Քրիստոնէական կրօնից սկզբունքներուն չի պաբապելնիս է, կամ Ուսումնարաններնուս մէջ?

աս ամենահարկաւոր առարկայիս կանոնաւոր կերպիւ հոգ չի տարուելուն համար եւ կամ ասոր վրայօք համառօտ եւ դիւրիմաց գրքեր ձեռքերնին չի գտնուելուն համար։

Ահա աս ափսոսալի թերութեան պատճառաւ ալ է որ միամիտ մերազգիք՝ իրենց Ուղղափառ Հաւատոյ վրայօք կատարեալ տեղեկութիւն չունենալուն համար՝ շատ պարագաներու մէջ օտարակրօն մարդոց առջեւ ամօթով մնալէն զատ՝ (ցաւ է ըսելու) ոմանք ալ՝ թէ՛ Մայրաքաղաքիս մէջ եւ թէ՛ ուրիշ շատ տեղուանք՝ շատ անգամ չար ազդեցութիւններու զոհ կ'ըլլան։

Աս մասին կարեօք չափ սիրելի Ազգիս նպաստելու փափաքը երկար ատենէ 'ի վեր սրտիս մէջ կայ։ եւ նոյն փափաքս լեցընելու շատ յարմար դատայ Կրօնագիտութեան եւ Հայկաբանութեան քաջահմուտ դասատու Զմիւռնացի Գրիգորեան Մսեր Պատուելոյն աշխատասիրութեամբը՝ յօրինուած Հաւատապատում եւ Քրիստոսապատում անունով երկու հատոր ընտիր գրքոյկները, որոնց պատուականութիւնը ամենուն ծանօթ է։

Ուստի յիշեալ հատորները մէկ ընելով, եւ ոմը Տաճկատառի Հայոց աշ[illegible]հաբառին յարմարցընելով, ու առաջին հատորոյն վերջերը մեզի համար աւելորդ քանի մը թերթերն ու սուրբ Ներսիսի Շնորհալւոյ հայկական տառերուն վրայ տանաւորները դուրս ձգելով՝ աս գիրքը չարադրեցի, որուն առաջին հեղինակը եղող բազմաբախտ Պատուելոյ ընտրած ՍԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՍ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ԱՐՔԱՅԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌԵՏԱՄԱՆԻ անունը դրի։

Աս գիրքը երկու մասն բաժնուած է. առաջնոյն մէջ Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ դաւանութեան համաձայն Քրիստոնէական հարկաւոր գիտելիքները. եւ երկրորդին մէջ՝ Սուրբ Աւետարանի աւանդութիւնները ամփոփեցի՝ յիշեալ Հեղինակին կարգադրութեանը հետեւելով ու հարց պատասխանի ձեւը պահելով, որն որ միտք պահելու դիւրութիւն կու տայ։

Եթէ աս գիրքը սիրելի ազգիս Ուսումնարաններուն մէջ կրթուող տղայոց եւ ուրիշ մարդոց ձեռքը անցնելով (ինչպէս որ կը յուսացուի) հոգեւոր օգուտ մը ընելու ըլլայ, նոյն օգտին համար պէտք եղած շնորհակալութիւնը բոլորովին առաջին Հեղինակին կը վերաբերի, ու ես ամենեւին շնորհակալութիւն սպասելու իրաւունք չունենալս առաջուց կը խոստովանիմ. մի-

Ը.

այն սա մխիթարութիւնը իմս պիտի ըլլայ, որ յիշեալ բազմերախտ Հեղինակին նպատակը յառաջացընելու օգնական գործիք մը եղած պիտի ըլլամ, ու սիրելի աղջակիցներս ինչո՛ւ համար Քրիստոնեայ ըսուելնին պիտի գիտնան, Քրիստոնէական պարտաւորութիւններին պիտի ճանչնան, ու Սուրբ Աւետարանի պարունակած հոգեւոր աւանդութիւնները պիտի սորվին, որն որ մեծ պարծանք է Հայոց, ուստի եւ ինձ։

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

ՀԱՐՑ

ԱՒԱՏՔՈՎ, ի՞նչ ես։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Քրիստոնեայ եմ։

Հ. Քրիստոնեայ բառը ի՞նչ կը նշանակէ։

Պ. Քրիստոսի հետեւող կամ հաւատացող։

Հ. Քրիստոնէական վարդապետութիւնը ի՞նչ կը սորվեցընէ։

Պ. Աստուածպաշտութիւն։

Հ. Աստուած ի՞նչպէս պաշտել պէտք է։

Պ. Ճշմարիտ հաւատքով, հաստատուն յուսով և անկեղծ սիրով։

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՒԱՏՔ

Հ. Քրիստոնէական հաւատալիքները որ գրուածքի մէջ կը գտնուին համառօտիւ։

Պ. Հանգանակի մէջ։

Հ. Որն է Հանգանակը։

Պ. «Հաւատամքն» է։

Հ. Գոց գիտեն։

Պ. Գիտեմ։

«Հաւատամք 'ի մի Աստուած՝ Հայր Ամենակալ՝ յԱրարիչն երկնի և երկրի, երեւելեաց և անտեսանելեաց։

«Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդւոյն Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստ-

ուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճրշ-
մարտէ, ծնուեալ՝ և ոչ արարած։
Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր, ո-
րով ամենայն ինչ եղեւ յերկինս և
'ի վերայ երկրի, երեւելիք և ա-
ներեւոյթք։

„Որ յաղագս մեր մարդկան և
վասն մերոյ փրկութեան՝ 'իջեալ
յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ,
ծնաւ կատարեալպէս 'ի Մարիամայ
Սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբով։ Ո-

դեցի, 'ի մի միրտութիւն, յապաշ-
խարութիւն, 'ի քաւութիւն և 'ի
թողութիւն մեղաց, 'ի յարութիւն
մեռելոց, 'ի դատաստանն յաւիտե-
նից Հոգւոց և մարմնոց, յարքայու-
թիւնն երկնից և 'ի կեանան յաւի-
տենականս „։

„Իսկ որ ասենն, էր երբեմն յոր-
ժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն
յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ
թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էու-
թենէ ասեն լինել զՈրդին Աստու-
ծոյ և կամ զՍուրբ Հոգին, և թէ
փոփոխելի են կամ այլայլելի, զայն-
պիսիսն նզովէ Կաթուղիկէ և Ա-
ռաքելական սուրբ եկեղեցի „։

„Իսկ մեք փառաւորեսցուք զ-
յաւաղ քան զյաւիտեան, եր-
կիրպագանելով Սրբոյ Երրորդու-
թեանն՝ և մեծ Աստուածութեանն

Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Հ. Ադ Հանգանակը ո՞ր տեղ սահմանուեցաւ։

Պ. Նիկիոյ ժողովոյն մէջ։

Հ. Նիկիա որո՞նք ժողովեցան։

Պ. Երեք հարիւր տասն և ութը Հայրապետները։

Հ. Ինչո՞ւ համար ժողովեցան։

Պ. Արիոս հերետիկոսը դատապարտելու համար։

Հ. Արիոսի հերետիկոսութիւնն ի՞նչ էր։

Պ. Արիոս կ'ասէր թէ՝ Հայր Աստուած Որդիէն մեծ է և Որդին արարած է։

Հ. Հանգանակը ո՞վ բերաւ Հայաստան։

Պ. Արիստակէս Հայրապետը։

Հ. Ո՞վ էր Արիստակէս Հայրապետը։

Պ. Գրիգոր Լուսաւորչի պզտիկ տղան էր։

Հ. "Իսկ մեք փառաւորեսցուք" ը ո՞վ ըսաւ։

Պ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ։

Հ. Ադ Հանգանակին մէջ քանի՞ գլխաւոր հաւատալիք կան։

Պ. Իններ՝

Ա. Գոյութիւն և միութիւն Աստուծոյ.

Բ. Երրորդութիւն Աստուածութեան։

Գ. Արարչագործութիւնքն՝ ուրիշ ոչ ոք չեն։

Դ. Մարմնացումն Յիսուսի։

Ե. Մեռանիլ։

Զ. Հոգւոյն Սուրբին գալուն։

Պ. Հին և Նոր Կտակարանն է։

Հ. Ինչո՞ւ համար Աստուածաշունչ կըսուի։

Պ. Անոր համար որ՝ Աստուծոյ շնչովը այսինքն՝ ազդեցութիւնովը գրուեցաւ։

Հ. Ո՞վ գրեց Հին կտակարանը։

Պ. Մարգարէները գրեցին։

Հ. Նոր կտակարանը ո՞վ գրեց։

Պ. Առաքեալները գրեցին։

Հ. Աստուծոյ անունը ի՞նչ է։

Պ. "ՈՐ ԷՆ"։

Հ. Ո՞ւսկից գիտես։

Պ. Աստուած ինքը Մովսէս մարգարէին յայտնեց ըսելով. "Ես եմ Աստուած ՈՐ ԷՆ"։ (Ել. Զ. Գլ. 14 հմր)։

Հ. Այդ անունը ի՞նչ կը նշանակէ։

Պ. Կը նշանակէ "Ես եմ ինքնագոյ, անփոփոխ, անսկիզբն, անվախճան"։

Հ. Եբրայեցւոց լեզուաւ ազգանունը ի՞նչպէս կըսուի։

Պ. "ԵՀՈՎԱՀ"։

Հ. Ուրիշ անուն ալ կրնայ տրուիլ Աստուծոյ։

Պ. Կարելի է. զոր օրինակ, Տէր, Ամենակալ, և այլն։

Բ. Երրորդութիւն Աստուածային անձանց։

Հ. Աստուածային անձինք քանի՞ են։

Պ. Երեք. Հայր, Որդի, Հոգի Սուրբ։

Հ. Աստուածային անձինք իրարմէ կը զանազանին։

Պ. Այո՛, անձնաւորութեամբ կը զանազանին։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Հօր անձը ուրիշ է, Որդւոյ անձը ուրիշ է, Հոգւոյն Սրբոյ անձը ուրիշ է։

Հ. Բնութեամբ ալ կը զանազանին։

Պ. Ո՛չ. ինչու որ համաբուն, համազոյ, համակամ, համազօր, եւ համախտուն են։

Գ. Սրարշաւորութիւն Աստուծոյ եւ Նախախնամութիւն։

Հ. "Սրարշաւորութիւն ըսե-



Ե. Միւսանգամ գալուստ Քրիստոսի։

Հ. Քրիստոս նորէն գալու է աշխարհք։

Պ. Գալու է։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Իւր աստուածային զօրութիւնովը եւ փառքովը։

Հ. Ինչու համար գալու է։

Պ. Կենդանի եւ մեռած մարդիկը դատելու համար։

Հ. Երբ գալու է։

Պ. Առենը յայտնի չէ, ինչու որ Քրիստոս չուզեց յայտնել։

Զ. Հոգւոյն Սրբոյ Յորդանան իջնելը։

Հ. Հոգին Սուրբ երբ իջաւ Յորդանան։

Պ. Երբոր Քրիստոս Յովհաննէս Մկրտչէն մկրտուեցաւ։

Հ. Ի՞նչպէս իջաւ։

Պ. Աղաւնիի կերպարանքով։

Հ. Ինչո՞ւ համար իջաւ։

Պ. Քրիստոսի Աստուածութիւնը յայտնելու համար և վկայելու թէ ճշմարիտ Որդի Աստուծոյ է։

Է. Քրիստոսի Եկեղեցին և անոր խորհուրդները։

Հ. "Եկեղեցի" ո՞ր ազգի բառ է և ի՞նչ կը նշանակէ։

Պ. Յունաց բառ է և ժողով կամ ժողովուրդ կը նշանակէ։

Հ. Քրիստոսի ժողովուրդը ո՞րն է։

Պ. Ամեն ճշմարիտ քրիստոնեայները։

Հ. Քրիստոսի եկեղեցին քանի՞ նշան կամ յատկութիւն ունի։

Պ. Չորս. Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առաքելականութիւն։

Հ. Եկեղեցին ինչու համար "Մի" կամ "մէկ" կըսուի։

Պ. Անոր համար որ ամէն քրիստոնեաները մէկ հաւատքով՝ մէկ Քրիստոս՝ մէկ Աստուած կը պաշտեն։

Հ. Եկեղեցին ինչու համար "Սուրբ" կըսուի։

Պ. Անոր համար որ ամէն Քրիստոնեաները միրտութիւնով մեղքերէն կը սրբուին, և Քրիստոնէական հաւատքը սրբութիւն կը քարոզէ։

Հ. Քրիստոսի եկեղեցին ինչու համար "Ընդհանրական" կըսուի։

Պ. Անոր համար որ քրիստոնէութիւնը շատ ազգերու մէջ տարածուած է, և մինչեւ աշխարհի վերջը մնալու է։

Հ. Ինչու համար "Առաքելական" կըսուի։

Պ. Անոր համար որ քրիստոնէական հաւատքը Առաքեալներուն ձեռքով ը քարոզուեցաւ և Առաքեալներուն խօսքերուն վրայ հաստատուած է։

Հ. Եկեղեցին քանի՞ խորհուրդ ունի։

Պ. Եօթն՝

Ա. Մկրտութիւն.

Բ. Դրոշմ.

Գ. Աստուածխորհրդութիւն.

Դ. Հաղորդութիւն.

Ե. Պատարագ մատուցութեան.

Զ. Կարգ կամ ձեռնադրութիւն.

Է. Օծումն հիւանդաց.

Հ. "Մկրտութիւն" ինչ ըսել է և ինչ բանով կը կատարուի։

Պ. Լուացումն ըսել է, և ջրով կը կատարուի։

Հ. Ինչի՞ օրինակ է։

Պ. Քրիստոսի մահուան և թաղման։

Հ. Ի՞նչ օգուտ ունի։

Պ. Երեխան կը սրբէ կը մաքրէ սկզբնական մեղքերէն որոց մէջ ծնած է։

Հ. «Դրոշմ» ի՞նչ կը նշանակէ։

Պ. Նշան կամ կնիք (մէօհիւր)։

Հ. Այդ նշանը մարդուն որ տեղը կը դնեն։

Պ. Ճակտին և դպ այտերանքներուն վրայ։

Հ. Ի՞նչ նիւթով կը կատարուի։

Պ. Սրբալոյս մեռոնով՝ իմաստան։

Հ. Դրոշմի օգուտը ի՞նչ է։

Պ. Քրիստոնէական հաւատքը պահելու համար մկրտելին զօրութիւն կու տայ։

Հ. Ապաշխարութիւն ի՞նչ ըսել է։

Պ. Ապաշխարել, այսինքն եաքը լալ։

Հ. Ապաշխարութիւնը ի՞նչպէս ըլլալ պէտք է։

Պ. Կատարեալ զղջումով և մեղքերը խոստովանելով։

Հ. Ինչո՞վ կը կատարուի։

Պ. Աղօթքով, պահօք և վճարմամբ։

Հ. Ի՞նչ օգուտ ունի։

Պ. Մարդը կը սրբէ ան մեղքերէն, որ մկրտութենէն եաքը գործեր է։

Հ. "Հաղորդութիւն" ի՞նչ բսել է։

Պ. Կցորդութիւն կամ մտանակցութիւն։

Հ. Ինչո՞ւ համար սուտանկ կը կոչուի։

Պ. Անոր համար որ հաղորդութիւնով Քրիստոսի մարմինն ու

արիւնը ճաշակելով անոր հետ հոգիով կը կցորդուինք ու մտանակից կը լինինք։

Հ. Հաղորդութեան նիւթը ի՞նչ է։

Պ. Ցորենի հաց և խաղողի գինի։

Հ. "Ամուսնութիւնը" ի՞նչ է։

Պ. Պսակուիլն է։

Հ. Ինչի՞ օրինակ է։

Պ. Քրիստոսի եկեղեցւոյ հետ անբաժան միաւորութեան օրինակ է։

Հ. "Կարգը" ի՞նչ է։

Պ. Հոգեւոր պաշտօն է որ "Քահանայութիւն" ալ կըսուի։

Հ. Ինչո՞ւ համար "Քահանայութիւն" կըսուի։

Պ. Անոր համար որ ձեռք դնելով կը կատարուի։

Հ. Ո՞վ ունի ձեռնադրելու իշխանութիւնը։

Պ. Եպիսկոպոսը։

Հ. Կարգը քանի՞ աստիճան ունի։

Պ. Եօթն՝

Ա. Դռնապանութիւն.

Բ. Դպրութիւն.

Գ. Երգմնեցուցչութիւն.

Դ. Ջահընկալութիւն.

Ե. Կիսասարկաւագութիւն.

Զ. Սարկաւագութիւն.

Է. Քահանայութիւն։

Հ. "Եպիսկոպոսութիւնը" ինչ է։

Պ. Գլխաւոր քահանայութիւն է, որ քահանայապետութիւն ալ կըսուի։

Հ. Կաթուղիկոսութիւնը ինչ է։

Պ. Գլխաւոր եպիսկոպոսութիւն է՝ անոր համար եպիսկոպոսապետութիւն ալ կըսուի։

Հ. Վարդապետը ինչ աստիճան ունի։

Պ. Քահանայութեան աստիճան ունի, բայց ուսուցիչ ալ ըլլալու պարտաւոր է, այսինքն Աստուածային պատգամները ժողովուրդին քարոզելու։

Հ. "Հիւանդաց օծումը" ինչ է։

Պ. Ան օծումն է որ հիւանդներուն սահմանուած է։

Հ. Ինչո՞վ կը կատարուի։

Պ. Աղօթքով ու օրհնած իւղով օծելով։

Հ. Առանց իւղով օծելու ալ խորհուրդը չի՞ կրնար կատարուիլ։

Պ. Կարելի է, ինչպէս որ հայոց եկեղեցին կը կատարէ միայն քահանայից աղօթքովը։

Ը. Յարութիւն մեռելոց։

Հ. "Յարութիւն մեռելոց" ը-սելով ի՞նչ պէտք է իմանալ։

Պ. Պէտք է իմանալ թէ մեռած մարդիկներուն մարմինները վերջին դատաստանին օրը՝ իրենց հոգիներուն հետ միաւորելով յարութիւն պիտի առնուն Աստուծոյ հրամանով։



Թ. Վերջին դատաստան։

Հ. Վերջին դատաստանը ովքե՞ր պիտի բնէ։

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Այդ օրն՝ երբոր արեւուն

զատելէն եաքը՝ ամեն մէկին իրենց գործքերուն համեմատ վարձք կամ պատիժ տալու է։

Հ. Արդարները ուր պիտի ըլլան, և մեղաւորները ո՞ւր ըլլալու են։

Պ. Արդարները երկնից արքայութեան մէջ ըլլալու են, ու մեղաւորները դժոխոց մէջ։

Հ. Արքայութիւնը ի՞նչ է։

Պ. Անանկ երջանիկ վիճակ կամ կեանք մը է, որ ոչ աչք տեսած է, ոչ ականջ լսած ունի և ոչ լեզու կրնայ պատմել։

Հ. Դժոխքը ի՞նչ է։

Պ. Անանկ դժբաղդ վիճակ մը է, որ ամեն տեսակ տանջանքներով ու թշուառութիւններով լեցուն է։

ԳԼՈՒԽ Բ.

ՅՈՅՍ

Հ. Աստուծմէ ի՞նչ յուսալ պէտք ենք։

Պ. Պէտք ենք յուսալ ան ամեն բարիքները, որ Աստուած խոստացած է իր սիրածներուն։

Հ. Ի՞նչ բարիք խոստացած է։

Պ. Յաւիտենական կեանք, հանդիստութիւն և անխախտման երանութիւն։

ԳԼՈՒԽ Գ.

ՍԷՐ

Հ. Աստուծոյ սէրը մեզմէ ի՞նչ կը պահանջէ։

Պ. Կը պահանջէ որ մեր օրէնքը և պատուիրանքը պահենք։

Հ. Աստուծոյ օրէնքը ի՞նչ կը հրամայեն։

Պ. Զար գործքերէն հեռու կենալ ու ապէկութիւն ընել։

Հ. Օրէնքը քանի՞ տեսակ են։

Պ. Երկու տեսակ են, բնական ու դրական։

Հ. Բնական օրէնքը ո՞րն է։

Պ. Մարդուս խղճմտանքն է։

Հ. Խղճմտանքը ինչո՞ւ համար օրէնք կը կոչուի։

Պ. Անոր համար որ մարդ խրդճմտանքով կրնայ ապէկին ու գէշը ճանչնալ։

Հ. Ինչո՞ւ համար բնական կը կոչուի։

Պ. Անոր համար որ ամէն մարդու սրտին մէջ բնութիւնէն կամ ծնած օրէնն տպուսրուած է։

Հ. Բնական օրէնքէն ուրիշ ի՞նչ օրէնքներ կան։

Պ. Ամէն քաղաքական ու դատաստանական օրէնքները։

Հ. Ան օրէնքները որո՞նք հաս-

տատեցին։

Պ. Օրինաւոր թագաւորներն ու իշխանները։

Հ. Ան օրէնքներուն ալ հնազանդելու պարտական եմք։

Պ. Այո՛, ինչպէս որ Աստուծոյ հրամանին։

Հ. Դրական օրէնքը ո՞րն է։

Պ. Ան օրէնքն է որ Աստուած գրով տուաւ։

Հ. Ինչո՞ւ համար «Դրական» կըսուի։

Պ. Անոր համար որ բնական օրէնքէն եռքը դրուեցաւ։

Հ. Դրական օրէնքը քանի՞ կը բաժնուի։

Պ. Երկուքի, այսինքն Հին ու Նոր։

Հ. Հին օրէնքը ո՞րն է։

Պ. Ան է որ Աստուած Մովսէս մարգարէի ձեռքովը տուաւ։

Հ. Ո՞ւր տեղ տուաւ։

Պ. Սինա լեռը։

Հ. Ե՞րբ։

Պ. Իսրայելացիները Եգիպտոսէն ելլելէն յետոյ օր եռքը։

Հ. Հին օրէնքը քանի՞ տեսակ էր։

Պ. Երեք տեսակ էր, այսինքն Բարոյական, Ծիսական և Դատաստանական։

Հ. Հիմայ ա՞դ օրէնքները խափանուած են։

Պ. Քրիստոնեայ աղգերուն մէջ Ծիսական ու Դատաստանական օրէնքները խափանուած են. բայց Բարոյական օրէնքը կը մնան, ինչու որ Քրիստոս զանոնք նորէն հաստատեց։

Հ. Բարոյական օրէնքը ո՞րն է։

Պ. Աստուծոյ տասը պատուիրանքներն են։

Հ. Տասը պատուիրանքը ինչի՞ վրայ գրուած էին։

Պ. Երկու քարէ տախտակներու վրայ։

Հ. Գիտես որոնք են տասը պատուիրանքները։

Պ. Այո։

Ա. Մի՛ երկրպագեր քեզ այլ աստուածք՝ բայց յինէն։

Բ. Մի՛ արտասաներ կուռս։

Գ. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ՚ի վերայ սնոտեաց։

Դ. Յիշեա՛ սրբել զօր շաբաթու։

Ե. Պատուեա՛ զՀայր քո և զմայր։

Զ. Մի՛ սպանաներ։

Է. Մի՛ շնար։

Ը. Մի՛ գողանար։

Թ. Մի՛ ասա վկայեր։

Ժ. Մի՛ ցանկանար տան ընկերի քո, եւայլն։

Հ. Աստուծմէն պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ Աստուծմէ զատ ուրիշ Աստուած չի ճանչնանք։

Հ. Երկրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ կուռք չը շինենք, կուռք չի պաշտեմք։

Հ. "Կուռք" ի՞նչ է։

Պ. Փայտէ, փայտէ կամ ուրիշ նիւթերէ շինուած պատկեր։

Հ. Երրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Զնչին բաներու համար Աստուծոյ անունը բերաննիս չառնենք, Աստուծոյ անունով երդում չընենք։

Հ. Չորրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ շաբաթ օրը սուրբ պահուի։

Հ. "Շաբաթ" ո՞ր ազգի բառ է և ի՞նչ կը նշանակէ։

Պ. Եբրայեցւոց բառ է ու հանգըստութիւն կը նշանակէ։

Հ. Քրիստոնեաները պարտաւո՞ր են շաբաթ օրը պահելու։

Պ. Ո՛չ. շաբաթի տեղ՝ կիւրակէ օրը պահելու պարտաւոր են։

Հ. Ո՞րն է կիւրակէ օրը։

Պ. Աշխարհի ստեղծուելուն առաջին օրն է, ու անոր համար միաշաբաթի ալ կըսուի։

Հ. Շաբաթի տեղ կիւրակէ օրը պահելը ո՞վ սահմանեց։

Պ. Առաքեալները սահմանեցին Քրիստոսի Համբարձումէն ետքը։

Հ. Ինչո՞ւ համար։

Պ. Անոր համար որ՝ Քրիստոս ան օրը յարութիւն առաւ, ու Հոգին Սուրբ ան օրը Վերնատունը իջաւ։

Հ. Հայոց բառ է կիւրակէն։

Պ. Ո՛չ, Յունաց բառ է, ու "Տէրունական" ըսել է։

Հ. Կիւրակէ օրը ի՞նչպէս սուրբ պահել պէտք է։

Պ. Ծառայական գործքերէն ազատ մնալով ու հոգեշահ գործքերու պարապելով։

Հ. Ծառայական գործքերը ո՞րո՞նք են։

Պ. Մարմնաւոր շահերու համար եղած աշխատութիւններն են։

Հ. Հոգեշահ գործքերը որո՞նք են։

Պ. Եկեղեցի երթալ, աղօթք ընել, քարոզ լսել, հոգեւոր գիրք կամ աւետարան կարդալ, դաս սերտել, եւայլն։

Հ. Հինգերորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ մեր հոգեւոր ու մարմնաւոր ծնողքները պատուենք։

Հ. Մեր հոգեւոր ծնողքները ո՞վ են։

Պ. Մեր բարեբարները, իշխանները, վարժապետները, քահանաները, եւայլն։

Հ. Ի՞նչպէս արժան է պատուել զանոնք։

Պ. Կատարեալ սէր ու հնազանդութիւն ցոյցերով ու անոնց երախտիքը չի մոռնալով։

Հ. Վեցերորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ մարդ չի մեռցուներ, այսինքն մեր կամքով ուրիշներուն կամ մեր մեռնելուն պատճառ չըլլանք։

Հ. Եօթներորդ, ութներորդ և իններորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ շունչ պէս անամօթաբար մեղքերու չի հետեւինք, գողութիւն չընենք, ուրուրա բանի վկայ չըլլանք։

Հ. Տասներորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ մեր ընկերներուն կամ ուրիշին ունեցածնե-

բուն ամենեւին աչք չի դնենք ու չի յափշտակենք։

Հ. Նոր օրէնքը ո՞րն է։

Պ. Քրիստոսին ուսանդուած և Առաքեալներէն քարոզուած ու գրուած պատուիրանքն են։

Հ. Քրիստոսի պատուիրանքներդ ի՞նչ կը հրամայեն։

Պ. Կը հրամայեն որ մեղքերէն ու մոլութիւններէն զգուշանանք ու առաքինութիւն գործենք։

Հ. Մեղքերը քանի՞ տեսակ են։

Պ. Երկու՝ Սկզբնական ու Ներգործական։

Հ. Սկզբնական մեղքը ո՞րն է։

Պ. Ադամայ գործած մեղքն է, որ է անհնազանդութիւն։

Հ. Ադամ ի՞նչ բանի անհնազանդեցաւ։

Պ. Աստուած անոր պատուիրած

էր որ բարին ու չարը գիտնալու ծառին պտուղէն չուտէ. բայց անիկայ չի հնազանդեցաւ կերաւ։

Հ. Ի՞նչ տեսակ ծառ էր։

Պ. Յայտնի չէ, ինչու որ Աստուածաշնչի մէջ անուանումը գրուած չէ։

Հ. Ներգործական մեղքը ո՞րն է։

Պ. Այն մեղքն է որ մենք մկրտութենէն ետքը կը գործենք։

Հ. Քանի՞ կը բաժնուին։

Պ. Երկուքի այսինքն մահու չափ ու ներելի։

Հ. Մահու չափ մեղքերը որո՞նք են։

Պ. Ծանր ծանր մեղքերն են։

Հ. Ներելիները որո՞նք են։

Պ. Պզտիկ ու թեթեւ մեղքերն են։

Հ. Գլխաւոր մոլութիւնները քանի՞ են։

Պ. Եօթն՝

Ա. Հպարտութիւն.

Բ. Նախանձ.

Գ. Բարկութիւն.

Դ. Ծուլութիւն.

Ե. Աղահութիւն.

Զ. Ուրկրամոլութիւն.

Է. Բղջախոհութիւն։

Հ. Հպարտութեան դէմ ինչ ա-
ռաքինութիւն գործել պէտք է։

Պ. Խոնարհութիւն։

Հ. Նախանձոմ դէմ։

Պ. Եղբայրսիրութիւն։

Հ. Բարկութեան դէմ։

Պ. Հեզութիւն ու համբերու-
թիւն։

Հ. Ծուլութեան դէմ։

Պ. Ա.րիութիւն, աշխատասիրու-
թիւն։

Հ. Աղահութեան դէմ։

Պ. Ողորմածութիւն, աղքատա-
սիրութիւն։

Հ. Ուրկրամոլութեան դէմ։

Պ. Բարեխառնութիւն, այսինքն
ուտելու և խմելու չափաւորու-
թիւն։

Հ. Բղջախոհութեան դէմ։

Պ. Ողջախոհութիւն կամ ժուժ-
կալութիւն, որ աղօթքով Աստուծ-
մէ ընդունիլ պէտք ենք։

Հ. Աղօթքը քանի կերպ է։

Պ. Երկու. հրապարակական և
առանձնական։

Հ. Հրապարակական աղօթքը որն
է։

Պ. Եկեղեցիներուն մէջ բաղմու-
թիւնով ուրիշներու հետ միակտեղ
եղած աղօթքն է։

Հ. Առանձնական աղօթքը որն է։

Պ. Ան է՝ որ մենք միանակ խուցի

կամ սենեակի մէջ նստած կը կա-
տարենք։

Հ. Աղօթքներուն գլխաւորը ո՞րն
է։

Պ. Տէրունական աղօթքն է, այ-
սինքն "Հայր մեր"-ը։

Հ. Ինչո՞ւ համար անոր աղօթքը "Տէ-
րունական" կըսուի։

Պ. Անոր համար որ՝ Տէրն մեր
Քրիստոսէ աւանդուեցաւ։

Հ. "Հայր մեր"-ին մէջ քանի՞
խնդրուած կան։

Պ. Եօթն՝

Ա. Հայր մեր որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն քո.

Բ. Եկեսցէ արքայութիւն քո։

Գ. Եղիցին կամք քո՝ որպէս յեր-
կինս և յերկրի։

Դ. Զհաց մեր հանապազորդ
տուր մեզ այսօր.

Ե. Թող մեզ զպարտիս մեր, որ-
պէս և մ՛ք թողումք մերոց պարտ-
ապանաց.

Զ. Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փոր-
ձութիւն.

Է. Այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ։

Զի քո է արքայութիւն և զօ-
րութիւն և փառք յաւիտեանս
ամէն։

ՎԵՐՋ ՄԱՆՐ ՈՒՍՄԱՆՑ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՀԱՒԱՏՈՑ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՀԱՐՑ

Ա. ՒԵՏԱՐԱՆ բառը ի՞նչ կը նշանակէ։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Աւետիք կամ բարի լուր պարունակող։

Հ. Ո՞վ գրեց Աւետարանը։

Պ. Չորս Աւետարանիչները՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս։

Հ. Ի՞նչ լեզուաւ գրեցին։

Պ. Մատթէոս՝ Եբրայեցւոց, Մարկոս՝ Եգիպտացւոց, Ղուկաս՝ Ասորւոց, Յովհաննէս՝ Յունաց լեզուաւ։

Հ. Սուրբ Աւետարանին մէջ ի՞նչ բաներ կը պատմուին։

Պ. Ա. Քրիստոսի ծնունդը.
Բ. Քրիստոսի մկրտութիւնը.
Գ. Քարոզութիւնները.
Դ. Հրաշագործութիւնները.
Ե. Զարչարանքը, Մահը և Թաղումը.
Զ. Յարութիւնը.
Է. Համբարձումը։

ԳԼՈՒԽ Ա.

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հ. Քրիստոս որմէ՞ն ծնաւ։

Պ. Սուրբ Կոյս Մարիամէն։

Հ. Որո՞ն աղջիկն էր Սուրբ Կոյս Մարիամ։

Պ. Յոակիմին ու Աննային։

Հ. Քրիստոսի հայրը ո՞վ էր։

Պ. Ըստ մարմնոյ հայր չունէր, բայց ըստ Աստուածութեան՝ Հօր Աստուծոյ որդին էր։

Հ. Հապա ինչո՞ւ համար Որդի Դաւթի և Որդի Յովսէփայ կըսուի։

Պ. Որդի Դաւթի անոր համար կըսուի որ Մայրը Մարիամ Դաւթի մարգարէին ցեղէն էր. իսկ Որդի Յովսէփայ ըսուելու պատճառը ան է որ՝ Մարիամ Սուրբ Յովսէփին

նշանուած էր։

Հ. Սուրբ Յովսէփ ո՞ր ցեղէն էր։

Պ. Ան ալ Դաւիթ մարգարէի ցեղէն էր։

Հ. Արհեստը ի՞նչ էր։

Պ. Հիւսնութիւն (տիւրկերլիք)։

Հ. Մարիամը ինչո՞ւ համար Աստուածածին կամ Աստուածամայր կըսուի։

Պ. Անոր համար որ անկէ ծնած Քրիստոսը ոչ միայն մարդ էր, այլ և Աստուած ու Որդի Աստուծոյ։

Հ. Քրիստոսի ծնունդը ի՞նչ եղաւ։

Պ. Աշխարհի ստեղծմանէն չորս հազար տարի եղաւ, Հերովդէս Ասկաղոնացիին ատենը։

Հ. Հերովդէս ո՞վ էր։

Պ. Հրէից թագաւոր էր, Հռոմայեցիներուն իշխանութեան տակը։

Հ. Ո՞ր կը նատէր։

Պ. Հերուսաղէմ։

Հ. Անատեղը Հռովմայեցիներուն թագաւորը ո՞վ էր։

Պ. Օգոստոս կայսրը։

Հ. Հայոց թագաւորը ո՞վ էր։

Պ. Աբգար՝ Արշամին տղան։

Հ. Ո՞ւր ծնաւ Քրիստոս։

Պ. Բեթղեհէմ քաղաքին մօտ՝ մսուրի (եէմլիքի) մը մէջ։

Հ. Քրիստոսի ծննդենէն ետքը ի՞նչ անուն դրին։

Պ. Ծննդեան ութերորդ օրը՝ անունը Յիսուս դրին։

Հ. Ո՞վ քսաւ որ ազ անունը դնեն։

Պ. Գաբրիէլ հրեշտակապետը։

Հ. Ե՞րբ։

Պ. Երբ որ Քրիստոսի ծնանելուն համար Մարիամին աւետիս (միւժ-ուէ) տուաւ։

Հ. Քրիստոս առաջ որքա՞ն յայտնուեցաւ։

Պ. Հովիւներուն։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Գիշեր ատեն երկինքէն հրեշտակ իջաւ ու անոնց ըսաւ.

„Զեզ աւետիք,

„Ծնաւ Փրկիչ,

„Ուրախ եղէք „։

Հ. Ան հրեշտակէն զատ՝ ուրիշ հրեշտակներ ալ իջա՞ն։



Պ. Այո, շատ հրեշտակներ իջան ու սկսան երգել "Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն"։

Հ. Հովիւները գացին Քրիստոս տեսնելու։

Պ. Այո, վաղեցին՝ Բեթղեհեմ գացին ու Քրիստոսը գտնելով՝ երկրպագութիւն ըրին։

Հ. Հիմա՞ն ասոնք ալ եկողներ եղան Յիսուսի երկրպագութիւն ընելու։

Պ. Երեք մոգերը եկան, որոնք իմաստուն ու թագաւորի պէս հարուստ մարդիկ էին։

Հ. Անոնք ո՞ր կողմէն եկան։

Պ. Արեւելեան հեռաւոր երկիրներէն։

Հ. Անոնք ի՞նչպէս գիտցան Քրիստոսի ծնունդը։

Պ. Երկինքը անոր աստղը (երկրը) տեսնելով։

Հ. Ուր ծնանելը գիտէ՞ին։

Պ. Չէին գիտեր. անոր համար՝ երբոր Երուսաղէմ հասան, սկսան հարցունելու, "Ո՞ւր է նորածին թագաւորը"։

Հ. Հերովդէս լսեց ապ բանը։

Պ. Լսեց ու շատ վախցաւ։

Հ. Մոգերուն բան չըսա՞ւ։

Պ. Անոնց բաւ որ նորածին թագաւորը գտնելէն ետքը՝ իրեն ալ խնայուն։

Հ. Միտքը ինչ էր։

Պ. Միտքը ան էր որ Յիսուսը սպաննել տայ։

Հ. Ինչու՞ համար ադ չար միտքը ունեցաւ։

Պ. Անոր համար որ՝ չուլայ թէ Յիսուս թագաւոր ըլլալով՝ իրեն թագաւորութիւնը ձեռքէն առնէ։

Հ. Մոգերը կրցան Յիսուսը գտնելու։

Պ. Այո՛, գացին գտան, երկրը-

պագութիւն ըրին ու ընծայ տուին։

Հ. Ի՞նչ ընծայ տուին։

Պ. Ոսկի, խունկ, ու զմուռս (սարպէնտ)։

Հ. Եարը մոգերը Հերովդէսին հանդիպեցան։

Պ. Ո՛չ, ուրիշ ճամբով՝ դարձան իրենց տեղը գացին։

Հ. Ովքի պատուիրեց անոնց որ անանկ ընեն։

Պ. Հրեշտակը երազնուն մէջ անոնց երեւնալով՝ պատուիրեց։

Հ. Հերովդէս չի բարկացաւ որ մոգերը գինքը խաբեցին։

Պ. Ի՞նչպէս չէ, անանկ բարկացաւ որ Բեթղեհէմի սահմանին մէջ գտնուած երկու տարեկան տղաներուն բոլորն ալ սպաննել տուաւ։

Հ. Ի՞նչ դիտաւորութիւնով ապանգթութիւնը գործեց։

Պ. Անդիտաւորութիւնով որ Յիսուս ալ ան տղաներուն հետ ապանեցաւ։

Հ. Հերովդէսի ապ դիտաւորութիւնը կատարուեցա՞ւ։

Պ. Ո՛չ, ինչու որ Յիսուս կոտրածէն ազատեցաւ։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Յովսէփ՝ Յիսուսը մօրը հետ առաւ Եգիպտոս փախուց։

Հ. Ո՞վ ազատուիրեց որ անանկ ընէ։

Պ. Հրեշտակը Յովսէփին երեւնալով երազին մէջ։

Հ. Եգիպտոս ինչքան ատեն մնացին։

Պ. Մինչեւ Հերովդէսին մեռնելը, այսինքն՝ երկու կամ ըստ ոմանց եօթը տարի։

Հ. Եղբը ո՞ւր գացին։

Պ. Նորէն Հրէաստան դարձան ու Նազարէթ բնակեցան, անոր համար ալ Յիսուս Նազովրեցի կոչուեցաւ։

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Քրիստոսի քառանօրեայ ընծայումը ու տաճարին մէջ վարդապետելը։

Հ. Յիսուսի՝ տաճարը ընծայուիլը ի՞նչպէս եղաւ։

Պ. Մարիամ Աստուածածին Յի-

ուսը տաճարը տարաւ ու հետը երկու տատրակ կամ աղաւնիի ձագ առաւ։

Հ. Մարիամ ինչու՞ համար հետը տատրակ կամ աղաւնի տարաւ։

Պ. Պատարագ մատուցանելու համար, ինչպէս Մովսիսական օրէնքին մէջ գրուած է։

Հ. Ան տեսնը ի՞նչ երեւելի բան պատահեցաւ։

Պ. Սիմէօն ծերունին տաճարին մէջն էր, ու երբ որ Յիսուսը տե-

սաւ՝ գիրկը առաւ, Աստուծոյ

փառք տուաւ ու ըսաւ. "Տէր, ահա աչքս տեսաւ Փրկիչն ու հեթանոսներուն լոյսը, ալ ասկէ ետքը թող մեռնիմ"։

Հ. Աստուածածնին ալ բան ըսա՞ւ։

Պ. Ան խօսքերը ըսաւ. "Ահաւասիկ դաւակդ շատ մարդերու կորստեանը պատճառ ըլլալու է, ու քու սիրտդ սուր մտնելու է"։

Հ. "Քու սիրտդ սուր մտնելու է" ըսելովը ի՞նչ ուզեց յայտնել։

Պ. Սա ուզեց իմացուցնելու թէ Որդիդ չարչարանքն ու հրէաներուն անհաւատութիւնը տեսնելով՝ սիրտդ վիրաւորուելու է"։

Հ. Յիսուսին Փրկիչ ըլլալը՝ Սիմէօնի պէս ուրիշն ալ հասկըցա՞ւ։

Պ. Այո՛, Աննա մարգարէն՝ որ ութսուն ու չորս տարեկան այրի

էր, ու տաճարէն չէր հեռանար, սկսաւ Աստուծոյ փառք տալու և Յիսուսի Փրկիչ ըլլալը քարոզելու։

Հ. Յիսուս քիչ մը մեծնալէն եաքը՝ ի՞նչ զարմանալի գործ ցուցուց։

Պ. Երբ որ տասներկու տարեկան էր՝ տաճարին մէջ կարդացող և գիտուն մարդերուն բան կը հարցուներ ու բան կը խօսէր, անանկ իմաստութիւնով՝ որ լսողները կը զարմանային։

ԳԼՈՒԽ Բ.

ԿՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Հ. Յիսուս որմէ՞ն մկրտուեցաւ։

Պ. Յովհաննէս Մկրտչէն։

Հ. Յովհաննէս Մկրտիչ որո՞ն

տղան էր։

Պ. Զաքարիա քահանային ու Եղիսաբէթին։

Հ. Ո՞ւր կը բնակէր։

Պ. Անապատը։

Հ. Ի՞նչպէս կեանք կանցուներ։

Պ. Ճգնաւորի ու մարգարէի պէս։

Հ. Ի՞նչ էր կերածը։

Պ. Մարախ (չէքիրկէ) ու վայրենի մեղր։

Հ. Հագուստը ինչէ՞ էր։

Պ. Ուղտու (տէվէի) բուրդէ։

Հ. Կապած գօտի՞ն։

Պ. Կաշիէ։

Հ. Անապատին մէջ ի՞նչ կրնէր։

Պ. Կը քարոզէր որ մարդիկ ապաշխարեն իրենց մեղքերուն համար։

Հ. Ապաշխարողներուն ի՞նչ կընէր։

Պ. Յորդանան գետին մէջ կը մկրտէր։

Հ. Յիսուս մեղքերէն սրբուելու համար մկրտուիլ ուզեց։

Պ. Ո՛չ, անիկայ մեղք չունէր։

Հ. Հապա ինչո՞ւ համար։

Պ. Զուրը սրբելով՝ մեր մկրտութեան խորհուրդը հաստատելու համար։

Հ. Յիսուսի մկրտութեան ատենը ի՞նչ հրաշալի տեսիլք պատահեցաւ։

Պ. Հոգին Սուրբ աղաւնիի կերպարանքով Յիսուսի վրայ իջաւ, ու երկինքէն ձայն եկաւ, «Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ»։

Հ. Յիսուս մկրտուած ատեն քանի տարեկան էր։

Պ. Երեսուն տարեկան էր։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Յովհաննէս Մկրտիչ։

Հ. Հրեաները Յովհաննէս Մկրտչի վրայ ի՞նչ կարծիք ունեցան։

Պ. Կարծեցին թէ ան է Մեսիան, այսինքն Քրիստոսը, որուն համար մարգարէները գրած էին։

Հ. Ինքը՝ իրեն համար ինչ ըսաւ։

Պ. Ըսաւ որ՝ "Քրիստոսը ես չեմ, անոր կարապետն եմ"։

Հ. "Կարապետ" ինչ ըսել է։

Պ. Առջեւէն գացող, ճամբայ բացող։

Հ. Յովհաննէս Մկրտիչ ինչ ըսաւ Յիսուսի համար։

Պ. Ըսաւ թէ՝ "Սա է գառն Աստուծոյ որ աշխարհի մեղքը կը ջնջէ. անոր հաւատացողը յաւիտեան կեանք կընդունի, ու չի հաւատացողը Աստուծոյ բարկութեան տակը կը մնայ"։

Հ. Յովհաննէս Մկրտիչ՝ Յիսուսը մկրտելէն ետքը ուր գնաց, ինչ եղաւ։

Պ. Երկու տարիի չափ բանտը մնաց ու ետքը գլխատուեցաւ։

Հ. Ով գլխատել տուաւ։

Պ. Հերովդէս Անդիպաս՝ որ Գալիլեացւոց աշխարհի չորրորդապետն էր, ու առաջին Հերովդէսի որդին էր։

Հ. Մինթ Յովհաննէսին թշնամին էր։

Պ. Այո՛, ինչու որ Յովհաննէս անոր չար գործքերուն համար՝ յանդիմանութիւն ըրած էր։

Հ. Յովհաննէսին մարմինը ով թաղեց։

Պ. Իրեն աշակերտները թաղեցին։

ԳԼՈՒԽ Գ.

ԲՐԻՍՏՈՍԻ ԲԱՐՈՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Յիսուս մկրտուելէն ետքը ուր գնաց։

Պ. Երիքովի անապատը գնաց։

Հ. Ան տեղ ինչ ըրաւ։

Պ. Քառասուն օր ծոմ պահեց ու փորձիչ սատանային յաղթեց։

Հ. Ետքը ինչ ըրաւ։

Պ. Սկսաւ աշակերտներ ժողովել, քարոզել ու սովորեցուցնել։

Հ. Աշակերտներուն գլխաւորները ինչ ըսուեցան։

Պ. «Առաքեալ» ըսուեցան, որ պրկուած ըսել է, ինչու որ աստին անդին ղրկուեցան քարոզութիւն ընելու։

Հ. Առաքեալները քանի էին։

Պ. Տասներկու՝

Ա. Պետրոս.

Բ. Անդրէաս.

Գ. Յակոբոս.

Դ. Յովհաննէս.

Ե. Փիլիպպոս.

Զ. Բարթողիմէոս.

Է. Թովմաս.

Ը. Մատթէոս.

Թ. Յակոբոս Ալփեան.

Ժ. Ղեբէոս (կամ Թադէոս).

ԺԱ. Սիմոն կանանացի.

ԺԲ. Յուդայ Իսկարիովտացի։

Հ. Յիսուս ինչ կը քարոզէր։

Պ. Կը քարոզէր որ մարդիկ իրեն հաւատան, ապաշխարեն, առաքինութիւն գործեն, որ երկնից արքայութեան արժանի ըլլան։

Հ. Ի՞նչ է առաքինութիւնը։

Պ. Առաքինութիւն կըսուի ամեն գործ՝ որ Աստուծոյ ընդունելի ու մարդոց առջեւ գովելի է։

Հ. Յիսուս իր քարոզութիւններուն մէջ ինչ առաքինութիւններ սորվեցուց։

Պ. Ճշմարտութիւն սիրել, սուրբ սրտով Աստուած ճանչնալ, հոգիով պաշտել, հեզ՝ խոնարհ՝ համբերող՝ եղբայրասէր կամ ընկերասէր ըլլալ ու ասոնց պէս ուրիշ բաներ սորվեցուց։

Հ. Ուրիշ ինչ խրատներ տուաւ

Պ. Կեղծաւորութենէ փախչիլ

հպարտութիւն չունենալ, ոխ չի պահել, բամբասանք չընել, սուտ չի խօսիլ, աւելորդ հոգեր չունենալ, եւայլն։

ԳԼՈՒԽ Դ.

ԲՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Յիսուս ինչ հրաշքներ գործեց։

Պ. Հիւանդները բժշկեց, ցաւագարները ողջացուց, դիւահարները ազատեց, խաւերուն ականջները ու համրներուն (տիպիկներուն) լեզուները բացաւ, կոյրերուն աչքերը լուսաւորեց, կաղերը (թոփալները) աղէկցուց և անդամալոյծները ոտք հանեց։

Հ. Յիսուս ասանկ բժշկութիւններ ընելու ատենը ի՞նչ դեղեր կը գործածէր։

Պ. Դեղ չէր գործածեր, բայց միայն իրեն Աստուածային կարողութիւնովը ու հրամանաւը հրաշքներ կըներ։

Հ. Յիսուսի ցուցուցած հրաշքներուն առաջինը ո՞րն էր։

Պ. Ջուրը գինիի փոխելն էր։

Հ. Այդ հրաշքը ե՞րբ և ո՞ւր ըրաւ։

Պ. Կանա Գալիլեացւոց ըսուած

քաղաքը, երբ որ Յիսուս մօրը հետ մէկտեղ Հարսանիքի մէջ նստած էր։

Հ. Ի՞նչպէս եղաւ։

Պ. Հարսանիքի ուրախութեան ատենը գինին պակսեցաւ, Մարիամ Յիսուսին յայտնեց. Յիսուս ալ մօրը խօսքը պատուելու համար՝ ծառաներուն հրամայեց որ դատարկ փարչերը ջրով լեցընեն. ու լեցընելէն ետքը՝ տեսան որ ջուրը պատուական անուշ գինի եղեր է։

Հ. Փարչերը քանի՞ հատ էին, ու որչափ գինի կրնային պարունակել։

Պ. Վեց հատ էին, ու ամեն մէկը՝ երկու կամ երեք մար* գինի կառներ։

Հ. Յիսուս ուրիշ հրաշքներ ալ ցուցո՞ց։

Պ. Ի՞նչպէս չէ. ծովուն կատղած

* Մար չափոյ անուն էր։

ալիքներն ու սասսիկ հողմը դադ-
բեցուց. ծովուն վրայ ոտքով քա-
լեց. և երկու անգամ ալ՝ միայն
օրհնելով մը քիչ հացը շատցուց։

Հ. Առաջին անգամ քանի՞ հացը
շատցուց։

Պ. Հինգ հացն ու երկու ձուկը։

Հ. Ան հացերէն ու ձկներէն քա-
նի՞ մարդ կերան։

Պ. Հինգ հազար մարդ կերան՝
կնիկներէն ու պզտիկ տղաքներէն
զատ։

Հ. Կրցա՞ն կշտանալ։

Պ. Այո՛, այնպէս կշտացան, որ
տասներկու սակառ (սէփէթ) ալ
հացի կտորուանք վերուցին։

Հ. Երկրորդ անգամին քանի՞ հա-
ցը շատցուց։

Պ. Եօթն հաց քանի մը ձկներու
հետ։

Հ. Ան հացերէն ու ձկներէն քա-
նի՞ հոգի կերան։

Պ. Կնիկներէն ու պզտիկ տղաք-
ներէն զատ՝ չորս հազար հոգի կե-
րան, ու եօթն զամբիւղ (դէմբիլ)
լեցուն հացի կտորուանք աւելցան։

Հ. Յիսուս մեռած մարդերու ալ
յարութիւն տուաւ։

Պ. Այո՛, երեք մեռած մարդ

կենդանացուց։

Հ. Ան մեռածները ոչ էին։

Պ. Առաջինն էր Յայրոս իշխանին տասներկու տարեկան աղջիկը։

Երկրորդն էր՝ այրի կնկան մը մէկ հատիկ զաւակը Նային քաղաքի մէջ։

Երրորդն ալ՝ Յիսուսի բարեկամը Ղազարոսն էր՝ որ Բեթանիա քաղաքը կը նստէր։

Հ. Յիսուս Յայրոսի աղջիկը ինչպէս կենդանացուց։

Պ. Ձեռքէն բռնեց, Եբրայեցերէն լեզուաւ "Տալիթա՛, կո՛ւմի" ըսաւ։

Հ. Այդ խօսքը ինչ կը նշանակէ։

Պ. Ո՛վ աղջիկ, ելի՛ր։

Հ. Այրի կնկան զաւակը ինչպէս յարոյց։

Պ. Երբ որ անիկայ թաղելու կը տանէին, Յիսուս դագաղին մօտեցաւ ու մեռելին ըսաւ, "Քեզ կըսեմ, կանգնէ՛"։ Մեռելը իսկոյն կանգնեցաւ նստաւ։

Հ. Յիսուս՝ Ղազարոսն ալ չի թաղուած յարոյց։

Պ. Ո՛չ, մեռնելէն ու չորս օր թաղուած մնալէն ետքը։

Հ. Ղազարոսը յարուցանելու առեն՝ Յիսուս ինչ ըսաւ։

Պ. "Ղազարէ՛, արի՛ եկ արտաքս"։

Հ. Ղազարոս ան ձայնը լսեց։

Պ. Լսեց ու իսկոյն ելաւ կանգնեցաւ*։

Հ. Ձեռքն ու ոտքը կապած չէին։

Պ. Կապած էին, բայց Յիսուս հրամայեց որ արձակեն։

* Ղազարոս նոր կենդանացած թիւն առնելէն ետքը տասն եւ հինգ տարի ապրեցաւ. բայց ամենեւին չի խնդաց կրնան։

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Ա. Քրիստոսի այլակերպութիւնը։

Հ. Յիսուս իւր Աստուածային փառքը ի՞նչ նշանով կամ տեսիլքով աշակերտներուն ցուցուց։

Հ. Թափօր լերան վրայ՝ Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս աշակերտներուն առջեւը՝ այլակերպելով,

այսինքն՝ իւր կերպարանքը փոխելով։

Հ. Ի՞նչպէս այլակերպեցաւ։

Պ. Երեսը արեւու նման, և ըզգեստները ճիւնի նման փայլուն ու ապիտակ երեւցան։

Հ. Ան տեսիլքին մէջ ուրիշ մարդիկ ալ երեւցա՞ն։

Պ. Այո՛, Մովսէս ու Եղիա մարգարէներն ալ երեւցան։

Հ. Աշակերտներուն հետ խօսեցա՞ն։

Պ. Ո՛չ, միայն Յիսուսի հետ խօսեցան՝ անոր չարչարանքներուն ու մահուան վրայ։

Հ. Ետքը ի՞նչ եղաւ։

Պ. Լուսաւոր ամպ մը իջաւ, զանոնք ծածկեց, ու երկինքէն ձայն մը եկաւ, "Դա՛ է որդի իմ սիրելի, զմա լուարուք"։

Հ. Աշակերտները ադ տեսան ու լսեցին նէ ինչ եղան։

Պ. Զարմացան՝ վախցան ու երեսի վրայ ինկան. բայց Յիսուս բըռնեց կանգնեցուց զանոնք։

Հ. Ադ հրաշալի տեսիլքը երկար տեւեց։

Պ. Ո՛չ, ինչու որ աշակերտները կանգնելէն ետքը՝ տեսան որ Յիսուսէ զատ՝ մէկը չի կայ։

Բ. Յիսուսի Թշնամիները։

Հ. Յիսուսի հրաշքները տեսնողներն ու քարոզութիւնները լսողներն Անոր Աստուածութեանը հաւատացին։

Պ. Ոմանք հաւատացին ու ոմանք չի հաւատացին։

Հ. Չի հաւատացողները ո՞վ էին։

Պ. Անոր թշնամիները, որոնք էին դպիրները, փարիսեցիները, քահանաները, աշխարհասէր իշխանները և ծերերը։

Հ. Դպիրները ո՞վ էին։

Պ. Հրէաներուն վարդապետներն ու կարդացողները։

Հ. Փարիսեցիները ո՞վ էին։

Պ. Փարիսեցի ըսուածները, կեղծաւոր՝ հպարտ՝ ագահ՝ և խաբեբայ մարդիկ էին, ու ինքզինքնին ուրիշներէն աւելի արդար և օրինապահ կը համարէին։

Հ. Ժողովուրդները Յիսուսի պատիւ կու տային։

Պ. Ժողովրդոց շատերը որ Յիսուսի հրաշքները տեսած կամ լսած էին, անոր հետեւիլ և անուանը փառաւորել կը ցանկային։

Հ. Յիսուսի անունը երբ աւելի հռչակեցաւ։



Պ. Երբ որ իշոյ և աւանակի վրայ նստած Երուսաղէմ մտաւ։

Հ. Ա՛դ ի՞նչպէս եղաւ։

Պ. Երբ որ ժողովուրդը լսեց թէ Յիսուս կու գայ, արմաւենիի և ձիթենիի ճիւղեր ձեռքերնին բռնած առջեւը ելան, ու զգեստնին գետնի վրայ փռելով մեծն ու պզտիկը սկսան աղաղակել, "Ո՛վսաննա, օրհնեալ, որ գայդ յանուն Տեառն, թագաւորդ Իսրայէլի"։

Հ. "Ովսաննա" ի՞նչ ըսել է։

Պ. Եբրայեցերէն կը նշանակէ, "Ո՛վ Յեսու կամ Յիսուս, փրկեա՛ դմեզ" և կամ "փրկութիւն 'ի բարձանց"։

ԳԼՈՒԽ Ե.

ԲՐԻՍՏՈՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԸ, ՄԱՀԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ

Հ. Յիսուս իրեն չարչարանքին ու մահուան համար աշակերտներուն առաջուց բան ըսա՞ւ։

Պ. Ըսաւ թէ երկու օրէն ետքը զատիկ կըլլայ և ինձի չարչարուել ու մեռնիլ պէտք է։

Հ. Ատիկայ եղա՞ւ։

Պ. Այո՛, ինչու որ Յիսուսի թշնամիները Կայիափա քահանայապետի տունը ժողովելով խորհուրդ ըրին որ Յիսուսը բռնեն ու սպաննեն։

Հ. Յիսուսը ոչ մատնեց կամ բռնել տուաւ։

Պ. Յուդայ խկարիովտացին, որ Յիսուսի աշակերտներէն մէկն էր։

Հ. Յուդայի այդ պիսի ապերախտութեան պատճառը ի՞նչ էր։

Պ. Իրեն ագահութիւնն ու արծաթասիրութիւնը։

Հ. Ուրեմն՝ Յիսուսի թշնամիները, ատակ խոստացեր էին Յուդայի։

Պ. Այո՛, եռեսուն արծաթ խոստացեր էին ու տուին։

Հ. Յիսուս գիտէր որ Յուդայ զինքը պիտի մատնէր։

Պ. Գիտէր, բայց չուզեց որ անունը տարով յայտնէ։

Հ. Ուրանց անունը տարու յայտնեց։

Պ. Այո՛, բաղարջակերաց տօնին առաջին երեկոյն երբ որ սեղան նստած էին՝ աշակերտներուն ըսաւ "Ձեր մէջէն մէկը զիս մատնելու է"։

Հ. Աշակերտները չի հարցուցին

թէ ոմ է։

Պ. Հարցուցին, ու Յիսուս ըսաւ, «Որուն որ պատառը թաթիսեմ՝ տամ՝ ան է»։

Հ. Որո՞ւ տուաւ։

Պ. Յուդային տուաւ՝ ըսելով, «Գնա՛ ինչ որ ընելու ես՝ շուտով ըրէ՛»։

Հ. Յուդան գնաց ան ատենը։

Պ. Ա.յո. շիտակ քահանաներուն ու դպիրներուն քովը գնաց, խոստացաւ անոնց որ Յիսուսը մատնէ։

Հ. Յիսուս անկէ ետքը ի՞նչ ըրաւ։

Պ. Սկսաւ աշակերտներուն մը-խիթարական խօսքեր ըսելու պարտիզի մը մէջ առանձնանալով աղօթելու։

Հ. Յուդայ ի՞նչպէս կատարեց իր չար կամքը։

Պ. Կէս գիշերին՝ քահանայապե-

տին ծառաներուն ու զինուորներուն հետ մէկտեղ Յիսուսի եղած տեղը եկաւ, ու բռնելու տուաւ զանոնք։

Հ. Յիսուսը ի՞նչ նշանով կրցան ճանչնալ։

Պ. Յուդային ցուցրցած նշանովը։

Հ. Յուդան ի՞նչ նշան ցուցրցած էր անոնց։

Պ. Նշան ցուցրցած էր, թէ ով որ համբուրելու ըլլայ՝ ան է Յիսուսը։

Հ. Յուդայ երբ որ Յիսուսը համ-

բուրեց՝ Յիսուս ի՞նչ ըսաւ անոր։

Պ. Ա. յս խօսքը, "Յուդա՛, դուդիս համբուրելով կը մատնես"։

Հ. Յուդան իր ըրած անօրէն գործին համար չի զղջացա՞։

Պ. Զղջացաւ, ու առած արծաթը տարաւ քահանայապետներուն ու ծերերուն տուաւ ըսելով, "Ես մեղք գործեցի որ արդար արիւնը մատնեցի"։

Հ. Քահանայապետները ի՞նչ պատասխան տուին անոր։

Պ. Դուն գիտես ըսին, ատիկայ մեզի հոգ չէ։

Հ. Յուդան թողուցին խնդրեց Յիսուսէն։

Պ. Ո՛չ, բոլորովին յուսահատուած՝ արծաթը տաճարին մէջ ձգելէն ետքը՝ գնաց ինքզինքը կախեց ու հոգւով մարմնով կորսուեցաւ։

Հ. Քահանայապետները ա՞յն ատ արծաթը։

Պ. Ա՛յն, բայց որովհետեւ սրբեան գին էր՝ արժան չի սեպեցին տաճարին դանձանածը դնելու ու անով պղտիկ տեղ մը ծախու առին օտարականներուն գերեզմանոց չինելու համար։

Հ. Երբ որ Յիսուսը բռնելու եկան, աշակերտները ի՞նչ ըրին։

Պ. Թշնամիներուն հետ կռուիլ ուզեցին, Պետրոսն ալ Սաղբոսին ականջը սրով զարկաւ կտրեց։

Հ. Յիսուս ատանկ վրէժխնդրութեան յօժարութիւն ունէր։

Պ. Ո՛չ, ուստի աշակերտներուն ըսաւ, "Սուրերը տեղը դրէ՛ք, ես եթէ ուզեմ՝ երկինքէն տասներկու գունդէն աւելի հրեշտակ իջեցնելու կարող եմ"։

Հ. Մաղքոսը ո՞վ էր։

Պ. Քահանայապետին ծառան էր։

Հ. Անոր ականջը կտրած մնաց։

Պ. Ո՛չ, վասն զի Յիսուս խնամն աղէկցուց։

Հ. Յիսուսը բռնելէն՝ եռքը ո՞ւր տարին։

Պ. Նախ Աննա քահանայապետին ու եռքը Կայիափա քահանայապետին քովը տարին որ դատուի։

Հ. Յիսուսի աշակերտները ի՞նչ եղան։

Պ. Փախան ցրուեցան, մինակ

Պետրոսն ու Յովհաննէսը Յիսուսի ետեւէն գացին ու Կայիափային տունը մտան։

Հ. Պետրոսին ան ատենը ի՞նչ պատահեցաւ։

Պ. Իրեն Յիսուսի աշակերտ ըլլալը երեք անգամ ուրացաւ, ինչպէս որ Յիսուս առաջուց ըսած էր։

Հ. Եռքը Պետրոս չի զղջցաւ։

Պ. Զղջցաւ, ու չատ արցունք թափեց։

Հ. Կայիափային տունը ի՞նչքան ատեն մնաց Յիսուս։

Պ. Բոլոր գիշերը ան տեղ պահեցին, ու երեսը թիքներով՝ ապտակ տարներով՝ ծաղր ընելով շատ չարչարեցին։

Հ. Առտուն Յիսուս ո՞ր տարին։

Պ. Պիղատոսին քովը։

Հ. Ինչո՞ւ համար։

Պ. Մեռցնելու հրաման առնելու համար։

Հ. Պիղատոս ո՞վ էր։

Պ. Հրէաստանի գաւառը էր հռովմայեցիներուն կողմէն դրուած։

Հ. Ո՞ր տեղացի էր։

Պ. Պոնտացի էր։

Հ. Պիղատոս շուտով հրաման տուա՞ Յիսուսը մեռցնելու։

Պ. Ո՛չ, քննեց խմացաւ որ Յիսուս անմեղ է, բայց Հերովդէսի քով ղրկեց որ ան ալ քննէ։

Հ. Հերովդէս ի՞նչ ըրաւ։

Պ. Յիսուսին քանի մը բան հարցուց և ուզեց որ Յիսուս իր առջեւը հրաշք ընէ։

Հ. Յիսուս անոր կամքը կատարեց։

Պ. Ո՛չ, վասն զի ոչ հրաշք գործեց և ոչ հարցմունքներուն պատասխան տուաւ։

Հ. Ե՞տքը։

Պ. Հերովդէս՝ Յիսուսի ետ կենալուն վրայ բարկանալով՝ վրան ճերմակ լաթ ձգել տուաւ, ու նորէն Պիղատոսի քովը ղրկեց։

Հ. Պիղատոս ան տեսն Յիսուսը ազատելու համար հնարքներ չի գործածեց։

Պ. Շատ հնարքներ գործածեց, բայց օգուտ չըրաւ։

Հ. Ինչո՞ւ համար։

Պ. Անոր համար որ Յիսուսի թշ-

նամիները շատ կատղած ելլալով ամենքը մէկ բերան կը պոռային, "Ի խաչ հան՝, 'ի խաչ հան զդա"։

Հ. Երբ որ Պիղատոս ադ խօսքը լսեց ի՞նչ բրաւ։

Պ. Բաղմութեան առջեւը ջրով ձեռքերը լուաց ու ըսաւ, "Ես ադ արդար մարդուն արիւնէն քաւեալ եմ"։

Հ. Հրէաները ի՞նչ պատասխանեցին։

Պ. Պատասխանեցին թէ "Արդար արիւնը մեր վրայ ու մեր զաւակներուն վրայ թող ելլայ"։

Հ. Ուրեմն Պիղատոս հրաման տուաւ Յիսուսը սպաննելու։

Պ. Այո՛։

Հ. Ի՞նչպէս սպաննեցին Յիսուսը։

Պ. Խաչը հանելով։

Հ. Ո՞ր տեղ։

Պ. Քաղաքէն դուրս՝ Գողգոթա ըսուած տեղը։

Հ. Յիսուսի խաչը ո՞վ տարաւ Գողգոթա։

Պ. Առաջ Յիսուսի կռնակը դրին, ետքը Սիմոն Կիւրենացիին* տուին

*Սիմոն Կիւրենացին Հրէայ չէր, բայց օտար ազ-

որ ան տանի։

Հ. Ինչու՞ համար տանկ ըրին։

Պ. Անոր համար որ՝ վախցան թէ չըլլայ որ Յիսուս խաչը չի հանուած ճամբան մեռնի։

Հ. Յիսուսի հետ ուրիշ մարդ ալ խաչը հանեցին։

Պ. Այո՛, երկու մարդ ալ խաչը հանեցին՝ մէկը Յիսուսի մէկ կողմը և միւսը մէկալ կողմը։

Հ. Ի՞նչ մարդիկ էին անոնք։

Պ. Երկուքն ալ չարագործ աւազակներ էին, բայց մէկը որ Յիսուսի աջ կողմն էր՝ աղքատութեան արժանի եղաւ։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Երբոր միւս ընկերը խաչին վրայէն Յիսուսին նախատինք կը-

գէ ու պանդուխտ էր, որ ան տանը իր ապայակին քաղաքը կու գար։ Մարկոս ԺԵ. Գլ. 21 Հմբ։

նէր, ինքը յանդիմանեց անոր, ու Յիսուսի Աստուածութեանը հաստատով, ըսաւ. «Տէր, ինչ ատեն



քու թագաւորութիւնովդ դաս՝ դիս յիշէ»։ Յիսուս ալ անոր ըսաւ. «Ամէն իմ հետս աղքատութեան մէջ ըլլալու ես»։

Հ. Երբոր Յիսուսը խաչը հանեցին՝ անոր հանդերձքը ի՞նչ ըրին։

Պ. Զինուորները առին իրենց մէջ բաժնեցին չորս կտոր պատուելով։

Հ. Պատմուճանն ալ պատուեցի՞ն։

Պ. Ո՛չ, պատմուճանը հիւսած ու

առանց կարի ըլլալուն համար՝ վի-
ճակ ձգեցին։

Հ. Յիսուսի խաչին վրայ ինչ գրուած էր։

Պ. Պիղատոս այս խօսքերը գրել տուած էր, «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»։

Հ. Ո՞ր ազգի լեզուաւ կամ գրով։

Պ. Եբրայեցերէն, Դաղմատերէն (այսինքն Լատիներէն) ու Յունարէն։

Հ. Յիսուս խաչին վրայ եղած ատենը՝ ինչ չարչարանք տուին։

Պ. Երբ որ Յիսուս «Ծարաւի եմ» ըսաւ, ջուրի տեղ լեղիով խառնած քացախ տուին։

Հ. Յիսուս իր հոգին ինչպէս աւանդեց։

Պ. Բարձր ձայնով սա խօսքերը ըսելով, «Հայր, հոգիս քու ձեռքդ կաւանդեմ»։

Հ. Յիսուս խաչին վրայ եղած ատենը՝ մահուան ժամուն ինչ երեւելի նշաններ եղան անոր Աստուածութիւնը յայտներու համար։

Պ. Արեգակը կարգէ դուրս խաւարեցաւ, տաճարի վարագոյրը վերէն վայր ինքնիրեն պատռեցաւ, ապառաժ քարերը ճեղքուեցան, գերեզմանները բացուեցան ու մեռելները ողջացան։

Հ. Ուրիշ ինչ եղաւ։

Պ. Զինուորներէն մէկը՝ Նիզակով Յիսուսի կողը ծակեց ու մէջէն արիւն ու ջուր վազեց։

Հ. Ինչու համար ըսիր որ արեգակը կարգէ դուրս խաւարեցաւ։

Պ. Անոր համար որ՝ ան ատեն լուսնի լրումն ըլլալով՝ արեգական խաւարելուն ատենը չէր*։

* Արեգական խաւարումը՝ բնականապէս Լուսնի ծննդեան ժամանակը կը պատահի։ Հեղինակ

Հ. Յիսուսի մարմինը քանի՞ ժամ խաչին վրայ մնաց։

Պ. Երեք ժամէն աւելի կամ չորս ժամու չափ*։

Հ. Յիսուսը ո՞վ խաչէն վար առաւ։

Պ. Յովսէփ Արեմատացին ու Նիկոդիմոս։

Հ. Սոնք ինչպէս մարդիկ էին։

Պ. Հրէից իշխաններ և Յիսուսի ծածուկ աշակերտներ էին։

---

* Յիսուս վեցերորդ ժամուն այսինքն կէսօրի մօտ խաչեցաւ, իններորդ ժամուն հոգին աւանդեց ու անկէ ետքը թաղուեցաւ։

Հ. Յիսուսի մարմինը ո՞ւր թաղեցին։

Պ. Յովսէփ Արեմատացին պարտէզը, նոր փորած քարէ գերեզմանի մէջ։

Հ. Հրէաները Յիսուսը թաղելէն ետքը ինչ զգուշութիւն ըրին։

Պ. Գերեզմանի դրան քարը կնքեցին, ու քովը պահապան զինուորներ դրին, որ չըլլայ թէ Յիսուսի մարմինը գողնան։



ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Ա. Հաղորդութեան խորհրդոյ սահմանումը։

Հ. Յիսուս Բաղարջակերաց տօնին առջի իրիկունը ինչ խորհուրդ աւանդեց։

Պ. Հաղորդութեան խորհուրդը,

որով իւր մարմինն ու արիւնը աշակերտներուն տուաւ։

Հ. Մարմինը ինչպէս տուաւ։

Պ. Հացը առաւ՝ օրհնեց կտրեց՝ ու աշակերտներուն բաժնեց՝ ըսելով, "Առէք, կերէք, այս է իմ մարմինս"։

Հ. Արիւնը ինչպէս տուաւ։

Պ. Գաւաթով գինի առաւ՝ օրհնեց՝ ու ըսաւ, "Արբէք 'ի սմանէ՝ այս է իմ արիւնս"։

Հ. Յիսուս աշակերտներուն պատուիրեց որ անոնք ալ աս խորհուրդը կատարեն։

Պ. Այո՛, "Ասիկայ արէք զիս յիշելու համար" ըսաւ։

Բ. Ոանրուայ։

Հ. Յիսուս հաղորդութեան խորհուրդը աւանդելէն առաջ՝ ինչ

առաքինութեան օրինակ ցուցուց։

Պ. Խոնարհութեան։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Զրով լեցուն կոնքի (լէկէնի) մէջ՝ աշակերտներուն ոտքերը լուալով։

Հ. Լուալէն ետքը ի՞նչ պատուէր տուաւ։

Պ. "Ինչպէս որ ես ձեզի ըրի, անանկ ալ դուք իրարու ըրէք" ըսաւ։

ԳԼՈՒԽ Զ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Հ. Յիսուս ե՞րբ յարութիւն առաւ։

Պ. Մահուան երրորդ օրը, այսինքն շաբաթ գիշերը՝ դէպ 'ի ըսյս կիւրակէի։

Հ. Գերեզմանի պահապանները ի՞նչ եղան։

Պ. Անանկ վախցան՝ սարսափեցան, որ մեռելի պէս գետնի վրայ փռուեցան։

Հ. Ո՞վ վախցուց զանոնք։

Պ. Հրեշտակը, որ յանկարծ ա-

հաւորութեամբ երկինքէն իջաւ, գերեզմանի դրան քարը գլորեց ու վրան նստաւ։

Հ. Յիսուսի յարութեան համբաւը շուտ տարածուեցաւ։

Պ. Այո՛. ինչու որ պահապանները մէկ քանին վազեցին քաղաքը գացին ու քահանայապետներուն պատմեցին։

Հ. Քահանայապետները ադ բանը որ լսեցին ի՞նչ ըրին։

Պ. Յիսուսի յարութիւնը սուտ կարծեցընելու համար՝ պահապաններուն շատ ստակ տուին, որ ըսեն՝ "Յիսուսի աշակերտները գիշերը եկան մարմինը գողցան երբ որ մենք քնացած էինք"։

Հ. Յիսուսի յարութիւն առնելէն ետքը որո՞ւ երեւցաւ։

Պ. Առաջ՝ Մարիամ Մագդաղենացիին, ետքը ուրիշներուն, և շատ անգամ իր աշակերտներուն մինչեւ քառասուն օր։

Հ. Աշակերտներուն ի՞նչ պատուէր տուաւ։

Պ. Պատուիրեց որ երթան բոլոր աշխարհ Աւետարանը քարոզեն ու հաւատացողները մկրտեն՝ յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

ԳԼՈՒԽ Է.

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Հ. Յիսուս ե՞րբ համբարձաւ։

Պ. Իւր յարութենէն եաքը՝ քառասներորդ օրը։

Հ. Ո՞ր տեղէն համբարձաւ։

Պ. Զիթենեաց լեռնէն, որ մօտ է Երուսաղէմի և Բեթանիայի։

Հ. Ո՞վ տեսաւ Յիսուսի համբառնալը։

Պ. Անոր աշակերտները տեսան։

Հ. Յիսուսի համբառնալու ատենը՝ անոնց ի՞նչ խոստացաւ։

Պ. Զանոնք մխիթարելու և զօրացուցնելու համար՝ Հոգին Սուրբը խրկելու խօսք տուաւ։

Հ. Յիսուսի համբարձումը ի՞նչպէս եղաւ։

Պ. Յիսուս իր աշակերտները առաւ՝ Զիթենեաց լեռը տարաւ, ու հոն զանոնք օրհնելէն եաքը՝ երկինքը ելաւ և ամպերուն մէջէն անցնելով՝ աներեւոյթ եղաւ։

Հ. Ուրիշ ի՞նչ տեսիլք եղաւ հոն։

Պ. Երբոր աշակերտները աչքեր-

նին տնկած դէպ 'ի երկինքը կը նայ-
յէին, անոնց երկու հրեշտակ ե-
ւեւցան մարդու կերպարանքով
ճերմակ լաթեր հագած։

Հ. Ան հրեշտակները աշակերտ-
ներուն բան ըսին։

Պ. Ա. յոյ. «Ո՛վ Գալիլեացիք, ի՞նչ
զարմացած երկինքը կը նայիք. սա
Յիսուսը որ համբարձաւ, դար-
ձեալ օր մը գալու է իւր փառքը»։

Հ. Հիմայ ո՞ւր է Յիսուս։

Պ. Հօր Աստուծոյ աջ կողմը նստած է, իւր Աստուածային յաւի-
տենական փառաց մէջ։

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

Ա. Քրիստոսի վերջին խօսքերն
ու պատասխանները։

Հ. Երբոր հրեաները Յիսուսը բամբասե-
ցին՝ Մատթէոս մաքսաւորի տունը կերա-
կուր ուտելուն համար՝ Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Առողջ մարդերուն բժիշկ հարկաւոր չէ,
հապա հիւանդներուն հարկաւոր է, (ըսաւ).
անանկ ալ՝ ես եկած եմ, ոչ թէ արդարնե-
րը՝ հապա մեղաւորները կանչելու համար»։

Հ. Երբոր հրեաները հարցուցին Յիսուսին
թէ՝ «Շաբաթ օրը բժշկութիւն գործել ար-
ժան է», Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Եթէ ձեր ոչխարը փոսի մէջ ինկած ը-
լայ՝ շաբաթ օրը դուրս չէ՞ք հաներ, (ըսաւ).
եթէ այդ արժան է, մարդ բժշկելն ալ ար-
ժան է»։

Հ. Երբոր Յովհաննէս Մկրտչին հրամանա-
ւը՝ անոր աշակերտներէն երկուքը եկան Յի-
սուսի հարցուցին թէ՝ «Դո՞ւ ես Մեսսիան
թէ ուրիշի սպասեմք», Յիսուս ի՞նչ պա-
տասխան տուաւ։

Պ. «Գացէք, (ըսաւ)։ պատմեցէք Յովհան-նիսին ինչ որ լսեցիք ու տեսաք։ ահա կոյ-րերը կը տեսնան, կաղերը կը քալեն, բորոտ-ները կը սրբուին, խուլերը կը լսեն, մեռել-ները կը կենդանանան, եւայլն»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները անոր հար-ցուցին թէ՝ «Ի՞նչ է պատճառը որ մենք քու բժշկած դիւահարները չի կրցանք բժշկել», Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Ասոր պատճառը ձեր թերեհաւատու-թիւնն է, (ըսաւ)։ եթէ մանանեխի (հարսա-լի) հատի չափ հաւատք ունենաք ու լեռան ըսէք տեղէդ ելիր, կելլէ։ և ձեզի համար անկարելի բան մը չըլլար»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները ուզեցին դիտնալ թէ՝ «Արքայութեան մէջ երկնից մէջն ով մեծ ըլլալու է», Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. Պզտիկ տղայ մը կանչելով անոնց ցու-ցուց ու ըսաւ, «Եթէ դուք աս տղայիս պէս խոնարհ ու անմեղ չըլլաք, արքայութիւն չէք կրնար մտնալ։ ով որ ասոր պէս ինքզ-ինքը կը խոնարհեցընէ՝ ան է մեծ արքա-յութեան մէջ»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները մանր տը-զաքը չէին ձգեր Յիսուսի մօտենան որ նե-

զութիւն չի տան, Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Թող տուէք որ գան, արքայութիւնը ատանկներունն է» (ըսաւ)։ ու տղաքը գիր-կը առնելով օրհնեց։

Հ. Երբոր Հրէաները տաճարի սրահին մէջ Յիսուսին ըսին, «Եթէ դու ես Մեսսիան, յայտնէ մեզի», Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Ես յայտնած եմ, (ըսաւ)։ ու իմ գործ-քերս կը վկայեն՝ որ ես Որդի Աստուծոյ եմ, բայց դուք չէք ուզեր հաւատալ, ինչու որ իմ ոչխարներէս չէք»։

Հ. Երբոր հարուստ երիտասարդ մը հար-ցուց Յիսուսին թէ՝ «Արքայութիւն երթալու համար ի՞նչ պէտք է գործել», Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Աստուծոյ պատուիրանքը պահէ» (ը-սաւ)։ Բայց երբոր երիտասարդը յայտնեց՝ թէ տղայութեան ատենէն միշտ պատուիրանա-պահ եղած է, Յիսուս՝ անոր այս խրատն ալ տուաւ։ «Եթէ կատարեալ ըլլալ կուզես՝ բո-լոր հարստութիւնդ աղքատներուն տուր ու եկուր»։ Այս խօսքը երիտասարդին շատ ծանր երեւցաւ, անոր համար գլուխը կախելով գնաց։ Այն ատենը Յիսուս ըսաւ, «Աւելի հեշտ է հաստ չուանին ասեղի ծա-

ունեցաւ

կէն անցնելը, քան թէ հարուստ մարդու Արքայութիւն մտնելը»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները զարմացան՝ անոր անկիծած թշնեմին շուտով չորնալուն համար, Յիսուս անոնց ի՞նչ ըսաւ։

Պ. «Դուք ալ, (ըսաւ). եթէ հաւատք ունենաք ու չերկմտիք, ամեն բան կրնաք ընել. եթէ լեռանդ ըսէք ելիր ծովը ինկիր, կինայ»։

Հ. Երբոր քահանայապետներն ու դպիրները Յիսուսին հարցուցին թէ՝ «Դու ո՞ր իշխանութիւնով կը քարոզես ու կը սորվեցընես, կամ թէ ո՞վ տուաւ քեզի ադ իշխանութիւնը», Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Ես ալ ձեզի բան մը հարցընեմ, (ըսաւ). և դուք պատասխան տուէք. Յովհաննէս Մկրտչի մարդ մկրտելը Աստուծմէ՞ է թէ մարդոյմէ»։ Եւ որովհետեւ անոնք աս բանիս վրայ մտածելէն ետքը «Զենք դիտեր» ըսին, Յիսուս ալ զանոնք՝ պատասխանելու հետեւեալ պատասխանով, «Ուրեմն ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ո՞ր իշխանութիւնով աս բանը կրնեմ»։

Հ. Երբոր փարիսեցիներն ու սադուկեցիները չարամտութեամբ հարցուցին Յիսուսի

թէ՝ «Հռոմայեցւոց կայսեր հարկ տալ պէտք է թէ ոչ», Յիսուս ի՞նչ պատասխանեց։

Պ. Դահեկան մը բերել տուաւ ու հարցուց. «Ասոր վրայ եղած պատկերը կամ գիրը որո՞ւ է»։ Երբոր ըսին «Կայսերն է», «Դացէք ուրեմն, (ըսաւ). կայսերը՝ կայսեր տուէք ու Աստուծոյնը՝ Աստուծոյ»։

Հ. Երբոր Յիսուս տեսաւ թէ այրի կնիկ մը տաճարի գանձանակի մէջ՝ երկու լումա ձըգեց, անոր համար ի՞նչ ըսաւ։

Պ. «Աս կնիկը, (ըսաւ). ամեն ստակ ձըգողներէն աւելի ձգեց, ինչու որ անոնք իրենց հարստութիւններնուն աւելորդը ձըգեցին, բայց աս իւր բոլոր ունեցածը ձգեց»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները տաճարին գեղեցիկ քարերուն ու շինութեանը վրայ կը զարմանային, Յիսուս ի՞նչ ըսաւ անոնց։

Պ. «Ատեն մը գալու է, (ըսաւ). որ աստ տեղ քար քարի վրայ չը պիտի մնայ»։

Հ. Երբոր Պետրոս Յիսուսը Որդի Աստուծոյ դաւանեց, Յիսուս ի՞նչ ըսաւ անոր։

Պ. «Երանի քեզ, (ըսաւ). Սիմոն որդի Յովնանու, ինչու որ մարմինն ու արիւնը չի յայտնեց քեզի ադ բանը, հապա իմ Հայրը՝ որ երկինքն է. դու վէմ ես, ու ես ադ վի-

մի վրայ չինելու եմ իմ եկեղեցին, և դը-
ժոխքի դուռները անիկայ յաղթահարելու
կարող ըլլալու չեն »։

Հ. Երբոր Կայիափա քահանայապետը հար-
ցուց Յիսուսին թէ՝ «Դու Աստուծոյ որդի
ես», Յիսուս ի՞նչ պատասխանեց։

Պ. «Դուն ըսիր, (ըսաւ)։ ու վերջին դա-
տաստանին օրը իմ փառքս տեսնելու է.ք»։

Հ. Երբոր փարիսեցիներն ու դպիրները Յի-
սուսի հարցուցին թէ՝ «Ինչու համար քու
աշակերտները չի լուացուած ձեռքերով հաց
կուտեն», Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Անլուայ ձեռքով հաց ուտելը, (ըսաւ)։
չի պղծեր, բայց սրտի մէջ եղած չար խոր-
հուրդները կը պղծեն»։

Հ. Երբոր Յիսուսի՝ աշակերտները հարցու-
ցին թէ՝ «Իւր երկրորդ անգամ գալը կամ
աշխարհիս վերջը ե՞րբ պիտի ըլլայ», Յիսուս
անոնց ի՞նչ ըսաւ։

Պ. «Ձեզի հարկաւոր չէ, (ըսաւ)։ ադ բանը
գիտնալ, որ Հօր Աստուծոյ կամքն կախ-
ուած է, բայց ան ժամանակ պիտի ըլլայ,
երբոր ամենեւին մէկը չի կարծեր»։

Բ. Քրիստոսի ըսած առակները։

Հ. Ի՞նչպէս է երկու պարտապաններուն
առակը, զոր Յիսուս խօսեցաւ։

Պ. Երկու հոգի մէկ մարդու պարտական
էին. մէկը հինգ հարիւր դահեկան պարտք
ունէր, ու միւսը յիսուն։ Առնելիքի տերը եր-
կուքին պարտքն ալ բաշխեց։ Ա՛ս երկու պար-
տապաններուն ո՞րը պէտք է աւելի սիրէ
առնելիքի տերը։ Յայտնի է թէ ան՝ որուն
պարտքը աւելի էր։ (Ղ՚-ԿԷ. Գ. 41—43 հդ.)։

Հ. Յիսուս ինչու՞ համար աս առակը խօ-
սեցաւ։

Պ. Հասկրցուներու համար՝ թէ շատ մեղքի
տէր մարդն ալ թողութիւն կը գտնայ, որ
Աստուծոյ մեծ սէր ու ջերմեռանդութիւն
ունենայ։

Հ. Երկրագործի առակը ի՞նչպէս խօսեցաւ
Յիսուս։

Պ. Երկրագործին մէկը սերմ կը ցանէր.
սերմերէն՝ ո՛րը ճամբու վրայ էյնալով թռչ-
չունները կերան, ո՛րը քարոտ տեղ ինկաւ ու
արմատ չի բռնեց՝ չորցաւ, ո՛րն ալ փուշերուն
մէջը մնալով խեղդուեցաւ. բայց աղէկ ու
փափուկ հողոյ վրայ ինկածները՝ ծլեցան ու

պղաբեր եղան, մէկ հատի տեղ եռեսուն, վաթսուն մինչեւ հարիւր հատ տուին։

Հ. Յիսուս այս առակը բացատրեց։

Պ. Այս. սերմերը՝ Աստուծոյ պատուիրանքն են. գետինները՝ մարդերուն սիրտերն են. անհաւատ՝ թուլահաւատ՝ աշխարհասէր ու փառասէր մարդերը առաքինութիւն չեն կրնար գործել. բայց բարի և ջերմեռանդ սիրտ ունեցողները Աստուծոյ պատուիրանքը ուրախութեամբ մտիկ ընելով, համբերութիւնով շատ առաքինական պտուղներ կու տան։

Հ. Անգութ ծառային առակը ի՞նչպէս է։

Պ. Թագաւոր մը իմացաւ որ իր ծառաներէն մէկը իրեն տասն հազար քանքար պարտք ունի, ու հրամայեց որ անով տեղով ծախեն յիշեալ ծառան ու պարտքը վճարել տան։ Ծառային՝ թագաւորին ոտքն ինկաւ, ու աղաչեց որ իրեն ժամանակ տայ պարտքը հատուցանելու։ Թագաւորն ալ մեղքընալով՝ բոլոր առնելիքը բաշխեց։ Նոյն ծառան ուրիշ մարդէ մը հարիւր դահեկան առնելիք ունէր. պարտապանը աղաչեց որ քիչ մը համբերէ ու առնելիքը չէ պահանջէ։ Բայց ծառան մտիկ չըրաւ ու բռնեց պարտքիանը բանտը դրաւ։ Ծառային ընկերները խեղճին վրայ ցաւելով դացին

աս անգթութիւնը թագաւորին յայտնեցին։ Թագաւորը ծառան կանչեց ու ըսաւ. «Ծառայ չար, ես քու աղաչանքիդ համար տասն հազար քանքար պարտքդ չի պահանջեցի, պէտք չէր որ դուն ալ հարիւր դահեկան առնելիքդ չի պահանջէիր»։ Եւ քը հրամայեց որ ծառան բանտը դնեն մինչև որ բոլոր պարտքը վճարէ։ (Մատ. ԺԸ. Գլ. 23—34 հմ.)։

Հ. Յիսուս աս առակով ի՞նչ ուզեց յայտնել։

Պ. Խնացընել ուզեց՝ որ Աստուած ալ մեր մեղքերը չի ներեր, եթէ մենք իրարու յանցանքը չի ներեմք։

Հ. Սամարացիին առակը Յիսուս ի՞նչպէս խօսեցաւ։

Պ. Մարդուն մէկը Երուսաղէմէն Երիքով երթալու առթիվ՝ աւազակներու հանդիպելով վիրաւորուեցաւ ու ճամբուն վրայ կիսամեռ ինկաւ։ Այն տեղէն՝ առաջ քահանայ մը անցաւ, եւ քը՝ Ղեւտացի մը. երկուքն ալ վիրաւորեալը տեսան, բայց առանց օգնելու ձգեցին դացին. վերջը Սամարացի մը եկաւ, գետինը ինկած վիրաւորը վերցուց, վերքը կապեց, ձիուն վրայ դրաւ ու մինչեւ պանդոկը տարաւ հատուց. պանդոկապետին ալ երկու դահեկան տուաւ որ վիրաւորը դար-

մանելու հոգ տանի, ու ըսաւ. «Եթէ աւելի ծախք հարկաւորելու ըլլայ, դուն ըրէ, ու ես նորէն տեղը դառնալու ատենս քեզի կը վճարեմ»։ (Ղուկ. Ժ. Գլ. 29—35 հմբ)։

Հ. Յիսուս սա առակը պատմելով ինչ ի-մացընել ուզեց։

Պ. Հասկրցունել ուզեց՝ թէ մարդիկ մարդասէր ըլլալ, ու յաւակցարար ընկերին օգնել պէտք են. և բարեգործութիւն ընելու կարողութիւն ունեցող մարդը՝ եթէ ձեռքէն եկած բարի գործը ընել չուզէ՝ մեղք կը գործէ։

Հ. Հարիւր ոչխարներուն առակը ինչպէս պատմեց Յիսուս։

Պ. Եթէ մարդ մը հարիւր ոչխար ունենայ, ու ոչխարներէն մէկը մոլորի, չէ՞ մի որ իննսուն ու ինը ոչխարը լեռերուն վրայ կը թողու, ու կերթայ մէկ մոլորեալը փնտռելու, և եթէ գտնելու ըլլայ՝ ան մէկ հատին վրայ աւելի ուրախ կըլլայ, քան թէ իննսուն ու իններին։ (Մատթ. ԺԸ. Գլ. 12—13 հմբ)։

Հ. Այս առակով ինչ հասկրցունել ուզեց Յիսուս։

Պ. Ինքը աշխարհ եկած է որ մեղքով մոլորուած կորսուած մարդերը դարձունէ. և Հոր Աստուծոյ կամքը ան է որ ամենեւին

մարդ մը չի կորսուի, ու եթէ մէկ մեղաւոր մը դարձի դայ ու մեղքերէն ազատի՝ Աստուած ուրախ կըլլայ։

Հ. Անառակ որդւոյն առակը ինչպէս պատմեց Յիսուս։

Պ. Մարդ մը երկու որդի ունէր։ Պզտիկ որդին հօրմէն իւր ժառանգութեան բաժինը խնդրեց՝ առաւ, ու հեռի քաղաք մը երթալով՝ անանկ անառակ կեանք մը վարեց, որ բոլոր ունեցածը փճացուց. ուստի գնաց ուրիշ մարդու քով խոզարած (խոզի հովիւ) եղաւ, բայց այնքան ողորմելի էր որ՝ խոզերուն կերած այծեղջիւրին ալ կարօտ կը մնար։ Ասանկ խեղճութեանը մէջ՝ միտքը բերաւ իր հօրը ծառաները որ հանգիստ կեանք կը վարեն ու բանի մը կարօտութիւն չունին. յոյսը չի կըտրեց, եկաւ նորէն հօրը տունը դարձաւ՝ ազատելու համար որ զինքը իբրեւ ծառայ մը ընդունի։ Հայրը հեռուէն որդին տեսնելուն պէս, վազեց եկաւ առջեւը ու վիզը փաթթուեցաւ։ Որդին ամչնալով ըսաւ, «Մեղայ, հայր, քու զաւակդ ըլլալու արժանի չեմ, ծառայի տեղ ընդունէ զիս»։ Հայրը աւելի գթալով՝ անոր աղուոր լաթեր հագցուց, գիրցուցած եզը (սըղրը) մորթել տուաւ, և ու-

բախտութեան սեղան պատրաստեց՝ կորսուած տղան դանալուն համար։ Այն միջոցը՝ մեծ տղան ալ ադարակէն դարձաւ՝ տունը եկաւ. բայց ուրախանալու տեղը՝ տրանջալ, բարկանալ սկըսաւ ու հօրը ըսաւ. «Այսչափ ժամանակ է որ քեզի հնազանդ եմ եղած ու դուն ինծի ուլ (քէչիկ եաւրու) մը անգամ չես տըված, բայց հիմայ աս որդուդդ համար՝ որ անառակութեամբ քու ստացուածդդ փճացուց, դիրցուցած եղը մորթել տուիր»։ Հայրը պատասխան տուաւ։ «Որդեակս. իմ ամեն ունեցածներս քուկդ են. բայց աս զաւակս կորսուած էր՝ ու գտնուեցաւ, անոր համար ուրախանալ պէտք է»։ Ղ-ա-կ. ԺԵ. Գլ 11—32 հմր)։

Հ. Յիսուս ինչու համար աս առակը ըսաւ։

Պ. Ցուցընելու համար՝ թէ Աստուած անանկ ողորմած է որ մեղաւորին կորսուիլը չուզեր, հապա անոր դարձի գալը կուզէ, և սրտով ղղջացող մեղաւորին յանցանքը կը ներէ։

Հ. Ցնտեսին առակը գիտես։

Պ. Այո. Հարուստ մարդ մը լսելով որ իրեն տնտեսը աւելորդ ծախքեր ըրած է, ուզեց որ իւր պաշտօնէն հանէ։ Ցնտեսը մտածեց որ եաքը ապրուստի կարօտ մնալու է, իրեն

տէրոջը պարտականները կանչեց ու անոնց պարտքերուն մէյմէկ մասը պակսեցուց։ Տէրը երբոր լսեց անոր ասանկ խելացութիւնը, գովեց զանիկայ։ (Ղ-ա-կ. ԺԶ. Գլ 1—8 հմր)։

Հ. Յիսուս աս առակով ի՞նչ հասկըցունել ուզեց։

Պ. Հասկըցունել ուզեց՝ թէ մենք ալ պէտք ենք դրամով և մարմնաւոր ողորմութիւններով աղքատները շահենք, և թէ՝ կարելի չէ Աստուծոյ ու մամոնայի (ստակի) ծառայել։

Հ. Մեծատունի ու Ղազարոսի առակը ի՞նչպէս է։

Պ. Մեծատուն մարդ մը փառաւոր զգեստներով զարդարուած՝ ամեն օր ուտելով խմելով ուրախութեան մէջ էր։ Անոր դրան քովը ալ աղքատ Ղազարոսը կը նստէր, այնչափ ոտորմելի՝ որ մեծատունի սեղանէն ինկած հացի փշրունքներուն կարօտ էր, ու շուները անոր վէրքերը կը լիզէին։ Երկուքն ալ մեռնելէն եաքը՝ մեծատունը դժոխքին մէջէն տեսաւ որ Ղազարոսը արքայութեան մէջ Հայր Աբրահամին գիրկը նստած էր, սկըսաւ կանչել. «Հայր Աբրահամ, ողորմիր ինծի, զրկէ Ղազարոսը՝ որ իր մատին ծայրը ջրով թրջէ, ու իմ չորցած ցամքած լեզուս զովացընէ»։

Ադ բանը անկարելի է, ըսաւ Աբրահամ. քու կենացդ մէջ ունեցած վայելմունքդ ու Ղազարոսին քաշած չարչարանքը միտքդ բեր»։ Մեծատունը նորէն աղաղակեց, «Հայր, կազաչեմ քեզի, դոնէ ադ մարդը ղրկէ հօրս տունը, որ երթայ եղբայրներուս իմացունէ, չըլլայ թէ անոնք ալ ասանկանքի տեղը գան»։ Աբրահամ պատասխան տուաւ. «Անոնք ունին Մովսէսի և ուրիշ մարգարէներու գիրքերը, թող կարդան ու հասկրնան»։ «Ո՛չ այդպէս չըլլար, ըսաւ մեծատունը. պէտք է մեռելներէն մէկը երթայ անոնց քարոզէ, որ ապաշխարեն»։ Բայց Հայր Աբրահամը ա նոր յոյսը կտրեց ասելով, «Եթէ եղբայրներդ մարգարէներուն գրած խրատներուն մտիկ չեն ըներ, յայտնի է որ մեռելներէն մէկն ալ երթայ՝ մտիկ ընելու չեն»։ (Ղ.-Կ. ԺԶ. Գլ. 19—31 հմբ)։

Հ. Ան առակով ի՞նչ ուզեց յայտնել Յիսուս։

Պ. Պէտք չէ որ մարդ իր յոյսը բաղդովին ասաշխարհքիս մարմնաւոր վայելչութիւններուն և փառքին վրայ հաստատէ, հապա սուրբ Գիրքերուն միտ դնէ ու անդի աշխարհքը միտքին չի հանէ։

Հ. Դատաւորի առակը ի՞նչպէս է։

Պ. Քաղաքի մը դատաւորը ոչ Աստուծմէ կը վախնար, և ոչ մարդոյմէ կամենար։ Այրի կնիկ մը ալ ամեն օր անոր քովը կու գար ու կաղաչէր որ իր դատատանը կարէ։ Շատ ատեն դատաւորը ադ կնկան գործին հոգ չի տարաւ. բայց կնիկը այնչափ գնաց եկաւ ու աղաչեց, որ դատաւորը ձանձրանալով սկսաւ ինքնիրեն ըսելու, «Թէպէտ Աստուծմէ վախ չունիմ ու մարդոյմէ չեմ ամչնար, բայց ասկնկան դատաստանը վերջացնեմ որ ձեռքէն ազատիմ»։ (Ղ.-Կ. ԺԸ. Գլ. 1—5 հմբ)։

Հ. Յիսուս ասառակով ի՞նչ իմացունել ուզեց։

Պ. Հասկրցունել ուզեց՝ որ շատ հարկաւոր է մեզի ամեն ատեն Աստուծոյ աղօթք ընելը, որպէս զի Աստուած ալ մեզի ողորմի ու մեր անդադար աղաչանքը լսէ։ Երբ որ Աստուծմէ չի վախցող ու մարդոյմէ չամչցող դատաւորը շատ աղաչանքի չը դիմանար, հապա Աստուած՝ որ ողորմած է և բարի՝ որչափ աւելի դութ ունի իր ստեղծուածներուվրայ, ու աղաչանքնին կը լսէ։

Հ. Փարիսեցիին ու մաքսաւորին առակը ի՞նչպէս է։

Պ. Փարիսեցիին ու մաքսաւորը տաճարը դա-

ցին. Փարիսեցին սկսաւ աղօթելու ու ըսաւ. «Աստուած իմ, փառք քեզ, ուրիշ մարդոց կամ սա մաքսաւորին պէս անիրաւ ու յափշտակող չեմ. շաբաթը երկու անգամ պահք կը պահեմ, և իմ ունեցածներուս տասանորդը կու տամ»։ Բայց Մաքսաւորը ինքզինքը մեղաւոր ճանչնալով, աչքը անգամ չէր ուզեր դէպ 'ի վեր բարձրացընել ու կուրծքը զարնելով կ'ըսէր, «Աստուած՝ մեղաւորիս ողորմիր ու մեղքերուս թողութիւն տուր»։ Աստուծոյ առջեւ Մաքսաւորը Փարիսեցիէն աւելի արդար համարուեցաւ։ (Ղուկ. ԺԸ. Գլ. 9—14 հմբ)։

Հ. Յիսուս ասա առակով ի՞նչ յայտնել ուզեց։

Պ. Մեղաւոր մարդը եթէ խոնարհ սրտով «Մեղայ» ըսէ ու Աստուծմէ թողութիւն խնդրէ, հաճելի կըլլայ. բայց արդարը եթէ ամբարտաւանութեամբ պարծենայ՝ կը դատապարտուի։

Հ. Ցանուտէրին ու մշակներուն առակը դիտես։

Պ. Ցանուտէր մը առաւուն եկաւ, մշակներ բռնեց մէյմէկ դահեկան վարձքով ու իր այգին ղրկեց. ետքը ժամը երեքին, վեցին ու իններին ուրիշ պարապ մարդիկ ալ դատաւ հետզհետէ այդին ղրկեց՝ ըսելով. «Գացէք, աշ-

խատեցէք, ու ինչ որ արժան է ձեր վարձքը կու տամ»։ Երեկոյին երբոր ամէն մշակները այդիէն դարձան, տանուտէրը իւր տնտեսին հրամայեց որ ամէն մէկուն մէյմէկ դահեկան տայ։ Առաջ վարձուած մշակները աս բանը տեսնելով սկսան տրտնջալ ու ըսին, «Մենք առաւօտէն մինչեւ իրիկուն աշխատեցանք ու ինչո՞ւ համար մէկ ժամ աշխատող մշակներն ալ մեզի չափ վարձք կառնեն»։ Ցանուտէրը դարձաւ ան տրտնջողներէն մէկուն ու ըսաւ. «Ընկեր, քեզի ի՞նչ ցնաս կայ. չէ՞ որ քեզի մէկ դահեկան վարձք խոստացած եմ. առ քու մէկ դահեկանդ ու դնա. միթէ ես իրաւունք չունիմ որու ինչ որ ուզեմ իմ քսակէս տամ»։ (Մատթ. Ի. Գլ. 1—15 հմբ)։

Հ. Յիսուս ադ առակը ըսելով ի՞նչ ուզեց հասկցունելու։

Պ. Շատ մարդիկ թէպէտ ուշ, բայց սրտով շատ ջերմեռանդ ու Աստուծոյ մօտ ըլլալով մեծ շնորհքներուն արժանի կըլլան, որովհետեւ կանչուածները շատ են ու ընտրուածները քիչ։

Հ. Քանքարը շահեցընող ծառաներուն ու քանքարը պահող ծառաներուն առակը ի՞նչպէս է։

Պ. Աշնուական մարդ մը հեռի երկիր երթալու պատրաստուած ըլլալով, իր ծառաները կանչեց ու ամեն մէկուն առանձին առանձին տակ բաժնեց, մէկուն հինգ, մէկուն երկու և մէկուն մէկ քանքար տուաւ, ու պատուիրեց որ մինչեւ իրեն դառնալը ան տակը շահեցընեն։ Աշնուականը ճամբորդութենէն դարձած ատենը՝ ծառաները կանչեց ու իմանալ ուզեց թէ ամեն մէկը առածը որչափ շահեցուցեր է։ Հինգ քանքար առնողը հինգ ալ շահ բերաւ, երկու առնողը երկու ալ վաստակ ցուցուց, ուստի երկու ծառան ալ գովութիւն առին ու պատիւ տեսան։ Իսկ երրորդը որ մէկ քանքար առած էր, բերաւ տուաւ քանքարը ըսելով, «Տէր, գիտէի որ դուն խիստ մարդ մըն ես, իմ առած տակս չի կորսնցուցնելու համար տարեր դեռնի տակ թաղեր էի, հիմայ բերի, առ տուածդ»։ Տէրը բարկացաւ ու ըսաւ. «Ո՛վ չար ու ծոյլ ծառայ, եթէ գիտէիր որ ես խիստ մարդ եմ, ինչու համար իմ տուած քանքարս դոնէ սեղանաւորներու չի տուիր որ հիմայ շահովը առնէի»։ Այս խօսքը ըսելով՝ յիշեալ քանքարը պահող ծառան վրէնտեց ու ձեռքէն տակը առնելով տասը քանքար ունեցող

ծառային տուաւ։ (Մատթ. ԻԵ. Գլ. 14—28 հմբ)։

Հ. Յիսուս ադ առակով ինչ ուզեց հասկցունել։

Պ. Աստուած արդարութեամբ կը դատէ, ու կուզէ որ ամեն մարդ իր ընդունած շնորհքը աշխատասիրութեամբ շատցունէ ու չի շատցունողը պատժոյ արժանի է։

Հ. Երկու զաւակներուն առակը ինչպէս է։

Պ. Մարդ մը երկու զաւակ ունէր, երկուքին ալ հրամայեց որ երթան այգին գործեն։ Առաջինը «կերթամ» ըսաւ ու չի գնաց, միւսը «չեմ երթար» ըսաւ ու ետքը զղջացաւ գնաց։ (Մատթ. ԻԱ. Գլ. 28—30 հմբ)։

Հ. Յիսուս ասոնց առակս ինչու համար ըսաւ։

Պ. Փարիսեցիներն ու դպիրները յանդիմանելու համար. ինչու որ անոնք կը պարծենային թէ՝ իրենք Աստուծոյ հնազանդ որդիներն են ու ճշմարիտ Աստուածապաշտ են. բայց Աստուծոյ պատուիրանքը չէին պահեր՝ ինչպէս որ արժան էր։

Հ. Այդի անկողին ու չար մշակներուն առակը գիտես։

Պ. Մարդ մը այդի անկեց ու մշակներու յանձնեց։ Ետքը երբոր պտուղի ժամանակը եկաւ, իր ծառաները ղրկեց որ երթան պը-

տուղը քաղեն։ Բայց մշակները ծառաներուն մէկը չարչարեցին, մէկը քարկոծեցին ու մէկը մեռուցին։ Այդիին տէրը ուրիշ ծառաներ ղրկեց, մշակները անոնց ալ առջիններուն պէս ըրին։ Վերջը իր որդին ղրկեց, կարծելով որ անորմէ կամենան, բայց մշակները անիկայ տեսնելնուն պէս՝ այդիէն դուրս հանեցին ու մեռուցին որ այդիին իրենք ժառանգեն։ Ա՛ս այսպէս ըլլալով, այդիին տէրը ի՞նչ պիտի ընէր, 'ի հարկէ ան չարագործ մշակները սաստիկ պատժով կորնչցուներէն ետքը՝ այդիին ուրիշ մշակներու յանձնելու էր, որ ատենին պտուղը իրեն տան։ (Մատթ. ԻԱ. Գլ. 33—41 հմր)։

Հ. Յիսուս աս առակը ի՞նչպէս մեկնեց։

Պ. Աստուած Հրէից ազգին մարգարէները ղրկեց. բայց Հրէաները զանոնք չարչարեցին ու մեռուցին. հիմայ ես եկած եմ, ղիս ալ մեռցունել կուզեն։ Ուստի Աստուծոյ արքայութիւնը անոնցմէ պիտի առնուի, ու ան ազգերուն պիտի տրուի որ Աստուածպաշտութեան պտուղ կուտան։

Հ. Թագաւորին տղուն հարսնիքը ի՞նչպէս է։

Պ. Թագաւոր մը իր տղուն հարսնիքը կընէր, ու ծառաները ղրկեց որ բարեկամները հրա-

ւիրեն. բայց բարեկամներէն ոմանք մէյմէկ պատճառով հարսնիքը չի գացին, ոմանք ալ՝ ծառաները բռնեցին ու մեռուցին։ Թագաւորը ասիկայ լսելով, զինուորներ ղրկեց, անոնց ամենն ալ ջարդել տուաւ ու տուներնին տեղերնին այրեց։ Եա՛ք փողոցներէն անցնողները ներս կանչել տուաւ, ու տեսնելով որ մէկը հարսնիքի լաթ հագած չէ, ըսաւ անոր. «Ընկեր. եթէ հարսնիքի լաթ չունէիր, ինչու համար աս տեղս մտար»։ Մարդը պապանձեցաւ ու չի կրցաւ պատասխան տալ։ Ուստի թագաւորը հրամայեց որ անոր ձեռքերն ու ոտքերը կապեն, ու հարսնիքէն դուրս հանեն։ (Մատթ. ԻԲ. Գլ. 2—13 հմր)։

Հ. Յիսուս ադ առակով ի՞նչ հասկցուց։

Պ. Հրէաները զինքը անարգելուն համար՝ պատժոյ արժանի են, ու Աստուծոյ արքայութեան մէջ միայն առաքինութիւններով զարդարուած հոգին տեղ ունի։

Հ. Ցասը կուսանաց առակը ի՞նչպէս է։

Պ. Ցասը կուսանք կային, հինգը յիմար ու հինգը խմաստուն։ Անոնք ձեռքերնին լապտեր բռնած՝ հարս ու փեսային առջեւը ելան։ Խմաստուն կուսանքը ուրիշ ամաններով ալ ձէթ առած էին հետերնին, իսկ յիմարները

առած չէին։ Փեսային դալը ուշացաւ ու ա-
մենքը քնացան։ Կէս գիշերին ձայն եկաւ,
թէ «Ելէք ահա փեսայն կու դայ»։ Ամենքն
ալ եկան ու լապտերնին պատրաստեցին։ Եւ
որովհետեւ յիմար կոյսերուն լապտերները
մարելու մօտ էին, իմաստուններէն եղ ուզե-
ցին. բայց անոնք չի տուին ըսելով, «Կարելի
է թէ մեզի ալ չի բաւականանայ. դացէք
ծախողներէն առէք»։ Յիմարները դացին,
փեսան ալ եկաւ. իմաստուններն պատրաստ
ըլլալով փեսային հետ հարսնիքը մտան ու
դուռը դոցուեցաւ։ Եաքը յիմարները եկան՝
սկսան փեսային աղաչել որ դուռը բանայ։
Բայց փեսայն չի բացաւ ու ըսաւ. «Ես ձեզի
չեմ ճանչնար»։ (Մաթթ. Իե. Գլ. 1—12 հմր)։

Հ. Յիսուս աս առակով ի՞նչ հասկցուցնել
ուզեց։

Պ. Հարկ է մեզի որ հոգւոյս փրկութեա-
նը համար հոգալու գործերնիս անհոգութիւ-
նով օրէ օր եւ չի ձգեմք, հապա՝ միշտ ար-
թուն ու պատրաստ ըլլանք իմաստուն կու-
սանայ պէս, որ անմահ փեսային առադաս-
տէն (այսինքն Քրիստոսի արքայութենէն) չի
զրկուինք։

Գ. Քրիստոսի կենարար վարդապետութիւններէն
այբուբենի կարգով քաղուածք։

Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն
իւր՝ աւերի. եւ ամենայն քաղաք կամ տուն բա-
ժանեալ յանձն իւր՝ ո՛չ կացցէ։

Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հա-
տանի եւ 'ի հուր արկանի։

Ամենայն մեղք եւ հայհոյութիւն թողցին մարդ-
կան, բայց զՀոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի...
մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ 'ի հանդերձելումն։

Ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղայ։

Ամենայն որ արտաքուստ 'ի ներքս մտանէ 'ի
մարդ, ո՛չ կարէ զնա պղծել. զի ո՛չ եթէ 'ի սիրտ
նորա մտանէ, այլ՝ յորովայն, եւ արտաքս ելանէ։

Ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս, եւ ո՛չ
գայ առ լոյսն՝ զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա.
իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն զի
յայտնի լիցին գործք նորա թէ Աստուծով գործեցան։

Ամենայն տունկ՝ զոր ո՛չ տնկեաց Հայր իմ երկ-
նաւոր՝ խլեսցի։

Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս։

Անկուայ ձեռօք ուտել՝ ո՛չ պղծէ զմարդ։

Անհնարինք առ 'ի մարդկանէ՝ հնարաւորք են
յԱստուծոյ։

Անձուկ է դուռնն, եւ նեղ՝ ճանապարհն որ
տանի 'ի կեանս։

Առանց իմ ո՛չ ինչ կարէք առնել։

Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քամէք եւ
զուղտս կլանէք։

Արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, դանձ

անպակաս յերկինս ուր ո՛չ գող մերձենայ՝ եւ ո՛չ ցեց ապականէ։

Բաղումն են կոչեցեալք, եւ սակաւ են ընտրեալք։

Բարի արարէք ատելեաց ձերոց։

Բարեւոք է աղ. եթէ աղն անհամեսցի՝ ի՞նչ համեմեսցի։

Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ո՛չ ցեց եւ ո՛չ ուտիճ ապականեն, եւ ո՛չ գողք ական հատանեն եւ գողանան։

Գինի նոր՝ 'ի տիկս նորս արկանելի է։

Դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւն երկնից։

Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել։

Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ։

Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ եւ ձեզ Հայրն ձեր երկնաւոր։ Ապա թէ ո՛չ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, եւ ո՛չ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։

Եթէ ո՛չ դարձջիք եւ մինջիք իբրեւ զմանկտի, ո՛չ մտանիցէք յարքայութիւն երկնից։

Եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ Փոխեաց աստի անդր, եւ փոխեսցի. եւ ո՛չ ինչ անհնարին լիցի ձեզ։

Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ. եւ ասիցէք թթենեւոյս այսմիկ՝ Խլեայ եւ տնկեայ 'ի ծովու, եւ հնազանդեսցի։

Եթէ ոք զբանն իմ պահեսցէ, զմահ մի՝ տեսցէ յաւիտեան։

Եթէ ոք կամիցի զկնի իմ գալ, ուրասցի զանձն

եւ առցէ՝ զխաչ իւր եւ եկեսցէ՝ զկնի իմ։

Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ։

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։

Եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս։

Եղերուք զթածք՝ որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր զթած է։

Եղիցի՝ ձեր բան, այո՛ այո՛, եւ ոչն ո՛չ։

Երանեալ է՝ որ ո՛չ գայթակղեսցի յիս։

Երանի՝ որոց ոչ իցէ տեսեալ (զիս) եւ հաւատասցեն։

Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դուք արարէք նոցա։

Զամենայն ինչ զոր եւ խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք։

Զայս պատուիրեմ՝ զի սիրեսջիք զմիմեանս։

Զգոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի՝ առնել առաջի մարդկան որպէս թէ 'ի ցոյց ինչ նոցա։

Զի՞ տեսանես զչիղ յական եղբօր քոյ, եւ 'ի քումմ ական զգերանդ ոչ նչմարես։

Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի, եւ զանձն իւր տուժեսցի։

Ընդ ամենայն դատարկ բանի՝ զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն դատաստանի։

Ընդարձակ է դուռնն, եւ համարձակ՝ ճանապարհն որ տանի 'ի կորուստ։

Ի բանից քոց արդարացիս, եւ 'ի բանից քոց պարտաւորեսցիս։

Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։

Ի պտղոյ ամտի ծառն ճանաչի։

Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։

Ի տան հոր իմոյ օթեւանք բազում են։
Իւրաքանչիւր ծառ՝ 'ի պտղոյ իւրմէ ճանաչի.
Լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի։
Խնդրեցէ՛ք՝ եւ տացի ձեզ, հայցեցէ՛ք՝ եւ գրտ-
ցիք, բաղխեցէ՛ք՝ եւ բացցի ձեզ։
Ծառ բարի պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՝
պտուղ չար առնէ։
Ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ եւ
ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ դան
բազում։ Եւ որ ոչն գիտիցէ՝ եւ արժանի դանի ինչ
գործիցէ, արբցէ դան սակաւ։
Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, եւ
երկոքին 'ի խորխորատ անկանին։
Հայեցարուք ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն եւ
ոչ հնձեն, որոց ոչ գոն չտեմարանք, եւ ոչ համբա-
ռանոցք, եւ Աստուած կերակրէ զնոսա. ո՞րչափ
եւս առաւել զձեզ՝ որ լաւ եք քան զթռչունս։
Հայր՝ մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր՝ մի է
հայր, որ յերկինս է։
Հա՛ն նախ զդերանդ յականէ քումմէ, եւ ապա
հայեսցիս հանել զչիղն յականէ եղբօր քոյ։
Հաստատուն կացէ՛ք 'ի սէր իմ։
Հարկ է գալ գայթակղութեանց. բայց վա՛յ մար-
դոյն այնմիկ՝ յոր ձեռն գայցէ գայթակղութիւն։
Հոգի է Աստուած, եւ երկիրպագուաց նորա՝ հո-
գւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել։
Մարդարէ յիւրում գաւառի պատիւ ո՛չ ունի։
Մարդ բարի 'ի բարի գանձուց սրտի իւրոյ հա-
նէ զբարիս։
Մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։
Մի՛ այսուհետեւ հոգայցէք եւ ասիցէք. Զի՞նչ

կերիցուք՝ կամ զի՞նչ արբցուք՝ կամ զի՞նչ զգեց-
ցուք... քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր թէ
պիտոյ է ձեզ այդ ամենայն։
Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց։
Մի՛ դատէք՝ զի մի՛ դատիցիք։
Մի՛ զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ։
Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան
արարէ՛ք։
Մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր
Քրիստոս է։
Մի՛ տայք զսրբութիւն շանց։
Յայտմ գիտասցին ամենեքեան եթէ իմ աշա-
կերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։
Յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա՛
զաղքատս, եւ զխեղս, զկաղս եւ զկոյրս, եւ ե-
րանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատու-
ցանելոյ քեզ, եւ հատուսցի քեզ փոխարէն 'ի յա-
յուութեան արդարոց։
Յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ,
ասասջիք թէ ծառայք անպիտանք եմք, զոր պար-
տէաքն առնել՝ արարաք։
Յորժամ կայցես յաղօթս, մուտ 'ի սենեակ քո,
եւ փակեա՛ զդուրս քո, եւ կա՛ց յաղօթս առ Հայր
քո 'ի ծածուկ։
Յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք
իբրեւ զհեթանոսսն։
Յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք եթէ ու-
նիցիք ինչ զումեքէ. զի եւ Հայրն ձեր որ յեր-
կինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր։
Յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ
ձախ քո՝ զինչ գործէ աջ քո։

Յորժամ պահեցէք, մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն տրամեալք, որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան՝ թէ պահիցեն։

Նովին չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ։

Շաբաթ վասն մարդոյ եղեւ, եւ ոչ եթէ մարդ վասն շաբաթու։

Շատ է աշակերտին՝ եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր, եւ ծառային՝ իբրեւ զտէր իւր։

Ո՛չ եթէ 'ի փշոց քաղեն թուզ, եւ ո՛չ 'ի մորենւոյ կթեն խաղող։

Ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս։

Ո՛չ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւանդաց։

Ո՛չ է աշակերտ առաւել քան զվարդապետ, եւ ո՛չ ծառայ՝ քան զտէր իւր։

Ո՛չ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց։

Ո՛չ է ծառայ մեծ քան զտէր իւր, եւ ոչ առաքեալ՝ մեծ քան զայն որ առաքեացն զնա։

Ո՛չ է մարդարէ անարդ՝ բայց եթէ 'ի գաւառի իւրում եւ յազգատոհմի, եւ 'ի տան իւրում։

Ո՛չ ինչ է 'ի ծածուկի, որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի։

Ո՛չ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել, եւ ոչ ծառ չար պտուղ բարի առնել։

Ո՛չ կարէ քաղաք թաղչել՝ որ 'ի վերայ լերին կայցէ։

Ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի։

Ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ 'ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ։

Ո՛չ օք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ՝ եւ զմիւսն սիրիցէ, կամ զմին մերձիցէ՝ եւ զմիւսն արհամարհիցէ։

Որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է, նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր։

Որ ասիցէ ցեղբայր իւր՝ յիմար, պարտաւոր լիցի ատենի։

Որ արբուսցէ միում 'ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ՝ ոչ կորուսցէ զվարձս իւր։

Որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի։

Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։

Որ գնայ 'ի խաւարի՝ ո՛չ գիտէ յո՞ երթայ։

Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, եւ որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։

Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, եւ որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։

Որ ինչ 'ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ. զի 'ի ներքուստ 'ի սրտէ մարդկան՝ խորհուրդք չարութեան ելանեն։

Որ 'ի փոքուն հաւատարիմ է՝ եւ 'ի բազմին հաւատարիմ է. եւ որ 'ի փոքուն անիրաւ՝ եւ 'ի բազմին անիրաւ է։

Որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բաղխէ՝ բացցի նմա։

Որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ, եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ։

Որ կորուսցէ զանձն իւր վասն Աւետարանին՝ ապրեցուսցէ զնա։

Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ։

Որ ունի զպատուիրանս իմ եւ պահէ զնոսա՝ նա՝ է որ սիրէ զիս։

Որ ոք գայթակղեցուսցէ զմի 'ի փոքրիկանցս յիս հաւատացելոց, լաւ է նմա՝ եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա, եւ ընկղմիցի 'ի խորս ծովու։

Որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք։

Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։

Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս արասջիք եւ դուք նոցա։

Ուսարուք յինէն՝ զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ։

Ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա։

Չէ մարգարէ ընդունելի 'ի քաղաքի իւրում։

Չէ յարուցեալ 'ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ։

Պատուիրան նոր տամ ձեզ՝ զի սիրիցէք զմիմեանս։

Պարտ է 'ի շաբաթու բարիս գործել։

Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր։

Տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյն՝ Աստուծոյ։

Օրհնեցէք զանիծիչս ձեր։

ՎԵՐՋ ՄԱՆՐ ՈՒՍՄԱՆՑ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՄԱՂԹԱՆՔ

ԴԱՍ ԱՌՆԵԼԷՆ ԱՌԱՋ

Միշտ էդ ինքնաբուն, ինքնաղօր Աստուած,
Դու Տէ՛ր՝ Տրնօրէն՝ Հայր հանուրց ազգաց,
Կաթեա՛ կաթիլ մի՝ յանդ մերոց մրտաց,
Ի քոց յանրսպառ յերկնաձիր չնորհաց.
Որով զարգացեալ 'ի հրահանգս ուսմանց,
Մատուսցուք քեզ, Տէ՛ր, պաշտօն գեանամած։

ԴՈՀՈՒԹԻՒՆ

ԴԱՍ ԱՌՆԵԼԷՆ ԵՏՔԸ

Փառք քեզ, բարձրբեալ Աստուած երկնաւոր,
Քեւ հրճուին միտք մեր, քեւ մեր սիրտք բոլոր.
Դու միայն հաստիչ մշտնջենաւոր,
Զի՛ք մեր այլ Աստուած, Դու միայն հրզօր։
Ըզքեզ ո՞ ետես . . . այլ մեք ճանաչեմք,
Զի 'ի քէն եղեաք, քեւ կեամք, քեւ շնչեմք.
Առանց Արարչիդ խնամոց ոչինչ եմք,
Պահեա՛ ըզմեզ, Տէ՛ր, ըզքեզ աղաչեմք։

Ա.Ղ.Օ.Թ.Բ

Ա.ՄԵՆ ՕՐՈՒԱՆ

Մեծ ես դու, Տէ՛ր, Մեծ են քո փառք,
Աստուած հզօր,
Օրհնեալ գովեալ յերկինս 'ի վեր՝ յերկիր 'ի ստոր։
Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ՝ Տէ՛ր հրաշաձայնեալ
յերգ հոգեւոր,
Էից էակդ յէից օրհնիս հանապազօր։
Ոչի՛նչ եմք մեք, ոչի՛նչ զօրեմք քո առաջի
Կալ, եւ օրհներգ ձայնիլ յօդել ըստ պատշաճի։
Իւրաքանչիւր՝ արիեղծ յարկաւ ծանրիմք յերկրի,
Թէ ոչ կացցէ մեզ զօրավիգ քո հովանի։
Բամեալքս ասասէն վերուզերձեմք արդ՝ անմոռաց
Քեզ փառք, պատիւ եւ գոհութիւն բազկատարած։
Ամենակալ, Ամենազօր, Հաստատիչ Աստուած,
Մեք ապիկարք քոյոյ ձեռին եմք ստեղծուած։
Յայտնի ուսաք, զի քեւ չարժիմք, քեւ եմք,
քեւ կեսմք։
Ի քէն ունիմք զոր ինչ ունիմք, առ քեզ կարդամք։
Ի մեր վերայ եղիցի միշտ քաղցրը քո խնամք,
Ամենայն 'ի չնորհս, առնել ընդ որ հաճի քո կամք։
Տէ՛ս, Տէ՛ր, զբեթա՝, կեցո՝ ըզմեր վեհ բարերարս,
Վարձ առ՛ուր նոցա ասա եւ յերկնից յանձատ 'ի
փառս։

Սարդուն
Քիչ թրուսաղէմէն
Երիցով